

2025

Միֆուր



ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈԼԵՎ

ՀԱՅ ԱՒԵՏ. Ա. ԵԿԵՂԵՑԻ



ԵՓՐԵՍ ԵՒ ՍԱՐԹԱ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՈՒՅՑ
(ՀԻՄՆՈՒԱԾ 1923-ԻՆ)

Միփառ

Տարեգիրք Հայ Անտարանական Գոլէճի

Կանոնադրարար լոյս կը տեսնէ 1959-Էն ի վեր

(Եւրոպայի տարրերարար լոյս տեսած է մերձեակիր՝ 1940-Էն իսկ տպագիր՝ 1954-Էն)

Պատասխանատու խմբագիր՝

Կողքի ձեւաւորում

Հրատարակութիւն՝

Էջադրում

Թողարկում

ԴՈՒՏ. ԱՐՄԵԼ ԻՐԱԵՆԵԱՆ

ՊՐ. ՎԱՅՁԵԼ ՄՈՐԱՆԵԱՆ
ԵՒ ՕՐԴ. ՀՈՐԻ ԶԵՍԵՆԵԱՆ

ՄԱՀԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԱԿ
ՏԻԿ. ԱՆՆՈՒՄ ՊԱՍԵԹ

Պէյրուք, Փետրուար 2026, Առցանց



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՈՒՅՑ
ARMENIAN EVANGELICAL COLLEGE
1923

ԴԻՄԱԲՐՈՂ ԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դոկտ. Արմեն Իւրնէշեան - *Suortu*



Լ սամ էք բոռի (մեծ ճանճի կամ իշամեղուի) տոգիւնը, կամ ալ խոշոր մժեղի մը բզզոցը, որ ականջիդ շուրջ կը դառնայ գիշերուան մթութեան մէջ՝ պատրուակ մըն ալ աւելցնելով անքնութեանդ պատճառներուն: Անցնող ամբողջ տարեշրջանը՝ գիշերցերեկ, անցուցինք այդ ձայնին ընկերակցութեամբ, այն տարբերութեամբ, որ այդ նեղացուցիչ ձայնին աղբիւրը միջատներ չէին, այլ անօդաչու թռչող սարքեր կամ drone-ներ, կամ ինչպէս ժողովուրդը կոչեց զանոնք՝ ام كامل-ներ (Umm Kamel): Այն աստիճան վարժուած էինք այդ աղմուկին, որ եթէ քիչ մը ուշանային յայտնուելու, կը զարմանայինք, թէ ինչո՞ւ չեկան:

Վարժուիլ բայը եւ գործողութիւնը յատուկ լիբանանեան իմաստ ունին: Անգլերէն resilience-ը (բառացի՝ ճկունութիւն) աւելի լաւ կը բացատրէ այդ հոգեբանական երեւոյթը: Եթէ մէկ կողմէ գէշ բանի մը վարժուիլը անձը կ'առաջնորդէ կրատրականութեան, նոյնիսկ յանձնողականութեան, ապա անտարակոյս ունի նաեւ դրական երեսակ, որ անձին մէջ կը զարգացնէ դիմադրողականութիւն (immunity) տուեալ իրավիճակին հանդէպ: Լիբանանցին կրնայ շատ արագ յարմարիլ նոր իրավիճակներու: Անցեալ տարին ապացուցեց այս մէկը: ԱԹՍ-ներու տոգիւնը այլեւս վախ չէր ազդեր, չէր ալ խանգարեր. երբեմն նոյնիսկ չէինք իսկ անդրադառնար: Լուրերէն կը կարդայինք Պէյրութի որոշ արուարձաններու վրայ ոմբակոծումի սպառնալիքի մասին՝ «մեզմէ հեռու է, դասերը շարունակեցէք» կ'ըլլար որոշումը:

Սակայն միշտ ալ այդպէս չէր իրականութիւնը: Տազնապը աւելիով զգացուց բարոյական այն պարտաւորութիւնը, որ ունիմ իբրեւ տնօրէն՝ աշակերտներուն եւ անձնակազմին հանդէպ: Իւրաքանչիւրին՝

մանուկ-պատանիի եւ ուսուցիչ-պաշտօնեայի ֆիզիքական ապահովութեան նկատմամբ զգացած պատասխանատւութիւնս մղեց գերզգուշութեամբ գործելու, նախապատիւ սեպելով անոնց անվտանգութիւնը. Այդ պատճառով է, որ դասաւանդութիւնը 36 օր առցանց կատարուեցաւ: Փառք Աստուծոյ՝ ի վերջոյ աշակերտները վերադարձան դպրոց: Տնօրէնութիւն եւ հոգաբարձութիւն, պաշտօնէութիւն եւ ուսուցչակազմ, այո՛, մանաւանդ ուսուցիչներ, մեր վախերը, տատամտումները թաղեցինք խորունկ՝ մեր հոգիներուն մէջ եւ դպրոց եկանք ու դասարան մտանք՝ կարծես ամէն ինչ շատ լաւ է: Դիւրին էր, բնա՛ւ: Թուլացանք՝ երբեմն: Բայց յաղթահարեցինք մեր տկարութիւնները, որովհետեւ աշակերտին բարօրութիւնը մեզի համար ամէն բանէ առաջ է: Իսկ ի՞նչ էր այլընտրանքը: Անդամալուծող վախ, հոգեսպառ բարկութիւն...: Թերեւս: Բայց մինչեւ էրք:

Յարգանք՝ դպրոցին հաւատարիմ ծնողներուն: Դիւրին չէր մանաւանդ այս տարի, անորոշութեան մէջ պատուած օրերուն հեռուները դրկել իրենց զաւակները, երբ բոլորին տուններուն անմիջական շրջակայքը մէկէ աւելի հայկական դպրոցներ կան եւ ուրիշներու նման իրենք ալ կրնային ըսել, «թող այս տարի ալ տունիս մօտ՝ աւելի ապահով դպրոց մը երթայ»: Բայց չըսին: Անոնց հաւատարմութիւնն ու վստահութիւնը դպրոցին առաքելութեան՝ պարտաւորեցնող է:

«Յիշուի, բայց չկրկնուի» կ'ըսէ արաբերէն ասացուածքը ("تذكر ما تنعاد"): Լիբանանեան տագնապին այս դրուագն ալ կը փակենք (կը փակենք...) այս խօսքով:

ԽԱԿԱՐԸ ԶԷ ՅԱՂԹԱԾ



Վեր. Ժիրայր Ղազարեան - Հովիւ

Ամէն տարի, երբ նստին այս խօսքը գրելու, ինքզինքիս պարզ, բայց տագնապալի հարցում մը կ'ուղղեմ. ինչն է այն ամենակարեւոր պատգամը, որ մեր աշակերտները պէտք է լսեն մերօրեայ աշխարհին մէջ:

Պէյրութը՝ լաւ ուսուցիչ է արագօրէն սորվեցնելու անոնց, թէ կեանքը հեշտ չէ: Անոնք կանուխէն գիտեն, որ իրենց դեռ կազմուող ուսերուն վրայ կը կրեն փխրուն տնտեսութեան մը բեռը, անորոշութեան ցաւը եւ ծնողներու լուռ վախերը: Սակայն ամէն առաւօտ, երբ կը հագնին իրենց համազգեստները ու կը մտնեն մեր դարպասէն ներս, ընտրութիւն մը կը կատարեն, յուսալու, հաւատալու եւ յարատեւելու որոշում մը կու տան: Այդ պահը կը դառնայ վստահութեան փոքր, բայց կտրուկ յայտարարութիւն մը՝ խաւարին դէմ:

Այս է մեր Գոլէճի հրաշքը: Մենք միայն կրթութիւն չենք բաշխեր, այլ նաեւ ապահով ապաստան կը տրամադրենք աճող հոգիներու, որոնք կը համարձակին տակաւին երագել: Մենք չենք դաստիարակեր անթերի աշակերտներ: Մենք կը խնամենք երիտասարդ սրտեր, որոնք կրնան սայթաքիլ, բայց նորոգ ուժով կը կանգնին, եւ իրենց կը յայտնաբերուի, որ Աստուծոյ սէրը անելի խորունկ է, քան իրենց վախերն ու պարտութիւնները: Կրթութիւնը այստեղ միայն գիրք եւ դաս չէ. ան հաւատքի աւանդ, արժէքի փոխանցում եւ կեանքի ուղիի ձեւաորում է:

Այս տարուան մեծագոյն մարտահրաւերը (եւ գուցէ ամէն տարուան) այն է, որ դիմադրենք յուսահատութեան գայթակղութիւնն ու անէծքը: Շատ դիւրին է հայեացքը սեւեռած պահել դիւրաբեկ իրականութեան վրայ եւ իյնալ յոռետեսութեան մէջ: Սակայն մեր կոչումն է, որպէս հայ անտարանական վարժարան՝ Պէյրութի սրտին մէջ, մեր խօսքերով եւ մեր կեանքով վկայել, թէ լոյսը տակաւին կը շողայ եւ խաւարը չէ յաղթած: Մենք կանչուած ենք ոչ միայն դասաւանդելու, այլեւ հաւատքի ջահը վառ պահելու, որպէսզի մեր աշակերտները գիտնան, թէ իրենց կեանքը արժէքաւոր է, իսկ ձայնը՝ լսելի:

Ու բոլորէդ, որ ովկիանոսներէ անդին այս տարեգիրքը կը կարդաք, կը խնդրեմ, որ գիտնաք, թէ Գոլէճին մէջ կատարուածը աննշան չէ: Ամէն աւանդուած նիւթ՝ դասարանէն ներս, ամէն արտասանուած սաղմոս՝ եկեղեցիէն ներս, ամէն ուրախ խաղ՝ բակին մէջ, թաքուն ապստամբութիւն ու յեղափոխութիւն է յուսահատութեան դէմ: Եթէ նոյնիսկ անձամբ չճանչնաք այն աշակերտները, որոնց կեանքը ձեր աղօթքներով եւ օժանդակութեամբ կը բարելաւուի, ապա վստահ եղէք, որ անոնք կը կրեն ձեր սէրը որպէս անտեսանելի վահան: Այդ սէրը անոնց հետ կը մնայ երկար տարիներ, եւ իրենք ալ պիտի շարունակեն այդ ժառանգութիւնը փոխանցել ուրիշներուն:

Մեր գաւակները կը դաստիարակուին ոչ միայն միայն գոյատեւելու, այլեւ հաւատալու համար: Հաւատալու, որ իրենց կեանքը իմաստ ունի: Հաւատալու, որ իրենց ձայնը արժէք ունի: Հաւատալու, որ Քրիստոս ինք անձամբ կը քալէ իրենց կողքին՝ Պէյրութի փողոցներուն մէջ: Այս հաւատքը միայն բառերու յիշատակութիւն չէ. ան մղիչ ուժ մըն է, որ զիրենք յարատեւ կը սրտապնդէ ամէն փորձութեան եւ ամէն ուրախութեան մէջ:

Խոցելիութիւնը տկարութիւն չէ, այնքան ատեն, որ անկէ ծնունդ կ'առնէ ստեղծագործելու ու մարտահրաւեր ընդունելու պատրաստակամութիւնը: Երբ աշակերտը համարձակօրէն դէմ յանդիման կը կանգնի իր վախերուն եւ կը վստահի որ Յիսուս իր կողքին է, ան կ'ըմբռնէ, որ իր խոցելիութիւնը կրնայ վերածուիլ զօրութեան, իր կեանքը՝ իմաստի, եւ իր դէմքը՝ ճաճանչի, ու կ'ոգեշնչէ ամբողջ աշխարհը:

Սիրելիներ,

Աղօթեցէք մեզի հետ, ոչ միայն մեզի համար: Կանգնեցէք մեր կողքին: Եւ յիշեցէք՝ նոյնիսկ երբ մենք փխրուն ենք, լքուած չենք: Հիմքը Քրիստոսն է, եւ Ան բաւարար է: Եւ այդ հիմքը ամուր պիտի մնայ որեւէ փոթորիկի դիմաց: Նոյնիսկ մեր թուլութեան մէջ վստահ ենք, որ Աստուած իր ձեռքով կը պահէ այս Գոլէճը եւ պահած է բոլոր անոնք, որ անցած ու գացած են այս դարպասներէն:



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ բաժանմունք

Ձախեն աջ՝
Օրդ. Վարդուկ Ֆոնդազյան
Տիկ.ք Չարմինե Ասմինեան
Եւ Արփի Գոյումճեան



ԱՐԱԲԵՐԵՆԻ բաժանմունք

Ձախեն աջ՝
Տիկ.ք Սոնա Մուղալեան
Նա'ամաթ ալ Խաթիյա
Մարիա Ռահպանի
Պրն. Թանիոս Ապտելնուր
(ատենապետ)



ԱՆԳԼԵՐԵՆԻ բաժանմունք

Ձախեն աջ՝
Տիկ.ք Նայիրի Նուրիա
Մարիա Խանճեան
Եւ Անգիլնե Օպէյտ *(համակարգող)*



ԳԻՏՈՒԹԵԱՆՅ բաժանմունք

Ձախեն աջ՝
Տիկ.ք Յասմին Տեմիրճեան
Լէյլա Տարուհի
Պրն. Պասել Թարապայ
Տիկ. Ռիթա Օհանեսեան
(ատենապետ)
Տիկ. Նուարդ Ղորղորեան *(բացակա)*



ԹՈՒՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ բաժանմունք

Ձախեն աջ՝
Տիկ.ք Յուլեր Քելիզեան
Նազիկ Քելեճեան
Պրն. Մահտի Էլ Հիլլանի (ատենապետ)
Պրն. Ռամատան Հաշում (բացակայ)



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ բաժանմունք

Ձախեն աջ՝
Պրն. Հաննա Պշարա (ատենապետ)
Տիկ.ք Ռոզ Պոլեյրի
Թալին Չոլագեան
Եւ Տիւնիա Նեայմէ



ՄԱՆԿԱԴԱՐՏԷԶ

Ձախեն աջ՝
Տիկ. Գարոլին Սերմանուկեան
Օրդ. Յասմիկ Թորոսեան
(Մանկապարտիզպանուհի)
Օրդ. Մարինա Մկրտիչեան



Ձախեն աջ՝
Տիկ. Լենա Միլետերեան - Ֆրանսերէն
Տիկ. Հռութ Եունիսեւ - Ս. գիրք

Պատկերապատկեր կապ



Պրն. Վազգէն Մուղալեան
Նկարչուփիլն
Ձեռարուեստ
Թատրոն



Պրն. Անդրանիկ Այվազեան
Համակարգիչ



Պրն. Վիգէն Թոսունեան
Ռոպորթիքս



Պրն. Ղազար Թեօշկերեան
Երգ, Երաժշտութիլն



Պրն. Ալիսթըր Պրեթ
Մարմնամարզ

Դոկտ. Զաւէն Մսրրլեան
Պատուակալ տնօրէն



Տիկ. Լարա Գարամանուկեան
Հաշուապահուհի եւ գանձիչ



Տիկ. Վերա Հաւանճեան
Քարտուղարուհի



Օրդ. Մարինէ Ծեհիրեան
Տնօրէնի օգնական եւ հանրային հաղորդակցութեան համակարգող



Պրն. Վարուժ Էլմանճեան
Տեսուչ



Պրն. Յովհիկ Ծատրեան
Պահակ



Զախէն աջ՝
Տիկ.ք Արշօ Աւետեան, Սիրուն Քիլիւքեան, Հալիմէ
Հոգատարներ

12-րդ դասարան

Ձախէն աջ՝

Կրէյս Հալաճեան

Արին Պաստաճեան

Քրիստափոր Ալեւմեգեան

Մոհամմատ Համմուտ

Դալար Տագետեան

Սերլի-Ռոզի Շահինեան

Դաստիարակ՝

Տիկ. Անգիլէ Օպէյո



Ձգրիր լաւագոյնքին
ու Բաւարայ, որ
աշխարհաբնով ու
յարարեւութեամբ
կ'իրագործես զայն:

Արին Մ.

Նրեակայէ՛, սիրէ՛,
Բաւարա՛, սպիտագործէ՛:

Արին

Բայց ջանաւորն արեւ
երկնքէն ու ԿԸ
Խառագայթէ վատ
Անցան յո եւ լսէ՛
Բ՝ Երգի Ինչպէս
Զարկորօք

Դալար

Started from the
bottom, now we're
here.

Mohammad

ԷրբձԷ ԿԸ փափայիւ, որ
կարողանա՛մ ճկարը
ստեղծել՝ ճանճակի
տար Դալի քաղտրէ՛ն
զայն պահելու Բաւար:

Զի

Այս օրուս
շրջանաւարտներ
վարուս Դճեակարներ:

Christopher

11-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝

Գեորգ Ապաճեան
Փաթիլ Պետիկեան
Նոյեմի Ֆրանսիս
Ալիսիա Գասպարեան
Անթոնի Տրժանի

Բ. շարք՝

Արտա Գրիգորեան
Ալի Ժապեր
Պետրոս Կիլիքճեան
Անտրիա ՏԵՄիրճեան

Դաստիարակ՝

Տիկ. Անգինե Օպեյտ



10-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝

Կարին Ալեմեճեան
Լիանա Շահինեան
Նարոտ Գարամանուկեան
Մարիա Պողոսեան
Մարիա Էլմաճեան

Բ. շարք՝

Վարդան ԱԼԵՍԵԱՆ
Գեորգ Պալեան
Յարուբ Կերկերեան
Իսա Սալիա

Բացակայ՝

Նոյեմի Պետրոսեան

Դաստիարակ՝

Տիկ. Նուարդ Ղորղորեան



9-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝

Միրա Ղորղորեան
Սելին Աստուրեան
Ժուլիա Ֆարսաքուրի
Անտրեա Աբրահամեան
Ռոզա-Ռիթա Պարսումեան

Բ. շարք՝

Չոհրապ Թերզեան,
Վարդան Մամիկոնեան

Դաստիարակ՝

Տիկ. Արփի Գուլոմճեան



8-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝


Կապրիելլա Նոհրա
Գայիանե Շեքերճեան
Կասիա Քելիշեան

Բ. շարք՝

Տարոն Գոճայեան
Հրակ Քեօշկերեան
Վահան Աւեսեան
Հրակ Պալեան

Դաստիարակ՝

Տիկ. Մարիա Խանճեան



7-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝
Քէյթ Վասիլեան
Նժդեհ Արժինեան
Ռաֆայել Ֆրանսիս
Նարի Քեօշկերեան
Պշարա Մուսա
Կարեն Թերգեան

Բ. շարք՝
Մապէլ Գասարեան
Փերլա Հաւանճեան
Ճիովանի Սալպաշեան
Դալար Կիլեքճեան
Փիթըր Այվազեան

Դաստիարակ՝
Տիկ. Մարիա Ռահպանի



6-րդ դասարան

Ձախեն աջ՝
ճոնաթան Տարուհիշ-Թալէպ

Հրակ Թերգեան

Մարիանա Մուսա

Սերենա Հատտատ

Դաստիարակ՝

Տիկ. Նա'ամաթ ալ Խաթիպ



5-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝
Եուզերսիֆ Հալաուլի
Հուտա ալ Սանտիտ
Կապրիել Գոլյումճեան
Յովկան Ժամկոչեան

Բ. շարք՝
Սերենա Գոլանճեան
Սինթիա Տարաքճեան
Մարիա Գոյունեան
Սոֆի Նոիրա
Էնճի Աբրահամեան
Դալար Քիրեճեան

Դաստիարակ՝
Տիկ. Յուլեր Բեշիշեան



4-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝
Սերենա Հաւանճեան
Սերի Շեքերճեան
Դանիել Թիւթիւնճեան
Կարին Բեշիշեան
Ալեքսա Բանոյեան

Բ. շարք՝
Փաթիլ Մամիկոնեան
Լոռի Խանճեան
Լիլա Սալպաշեան
Ժուտի Ժապեր

Դաստիարակ՝
Տիկ. Նայիրի Նոիրա



3-րդ դասարան

Ձախեն աջ՝

Գարմեն Սայիլեան

Սառա Սլէյթ

Քրիսթիա-Մարիա Նաճարեան

Այյուկ Սլէյթ

Փաթիլ Թորոսեան

Տեպորա Տարուհի-Թալէպ

Դաստիարակ՝

Տիկ. Չարմինէ Ասմինեան



2-րդ դասարան

Ձախեն աջ՝

Գարինա Թորոսեան

Առն Ղազարեան

Լորէն Սամահա

Միշէլ Սամահա

Մարիա Սամահա

Գարլի Բանոյեան

Ճոյ ալ Խուրի

Դաստիարակ՝

Տիկ. Սոնա Մուղալեան



Ա. դասարան

Ձախեն աջ՝

Ժան-Փիեռ Գույումճեան
Մհեր Աւետեան
Մարք-Վարդան Ղորղորեան
Ալի Մաքքե
Կայլ Թերզեան
Փաթիլ Վասիլեան
Քրիսթոֆըր Ճտըրեան

Դաստիարակ՝

Օրդ. Վարդուկ Ֆռնրզեան



Մանկապարտեզ

Ձախեն աջ, Ա. շարք՝

Քամի Ղազարեան
Ժուլտ Էլ Խուրի
Ալի Սայֆետտին
Անի-Երազ Գոճայեան
Ռալֆ Գոլյումճեան
Պօղոս Ճտըրեան
Առէն Արապաղեան

Բ. շարք՝

Մունա ալ Սանտիտ
Ուաֆա Ալի
Նուրայ Սայֆետտին
Վահէ Շէքերճեան
Ճէյսըն Էլ Խուրի
Թիա Ալի



Դաստիարակներ՝

Տիկ. Գարոլին Սերմանուկեան (Բողբոջ դասարան)

Օրդ. Յասմիկ Թորոսեան (Մանկապարտիզպանուհի եւ ծաղիկ դասարան)

Օրդ. Մարինա Մկրտիչեան (Կոկոն դասարան)



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ —

13 Մեպտեմբեր 2024-ին Ա. Ընդհանուր ուսուցչական ժողովով բացումը կատարուեցաւ ՀԱԳ-ի 102-րդ տարեշրջանին: Վեր. Ղազարեանի աղօթքէն ետք տնօրէն դոկտ. Իւրնէշլեան վարեց ժողովը: Երկրորդ մասով վերապատուելին հանդիպեցաւ հայ ուսուցիչներու հետ, պաշտամունքներուն անոնց գործօն մասնակցութիւնը քաջալերելով:





ՎԵՐԱՄՈՒՏ —

Սեպտեմբեր 23-ին ՀԱԳ-ի շրջափակն ու յարկերը լեցուն էին հրճուանքով ու ժպիտներով: Դպրոցի 102-րդ տարեշրջանի առաջին օրն էր, լի՝ յոյսով եւ ուրախութեամբ, հակառակ շրջապատի կացութեան: Օրը սկսաւ պաշտամունքով, վերադարձող եւ նորեկ աշակերտները ողջունելով, ապա Լիբանանի եւ Հայաստանի քայլերգերու երգեցողութենէն ետք տնօրէնը յայտարարեց կրթական տարուայ մեկնարկը: Ծնողաց վարչութեան հիւրասիրութենէն ետք, 12-րդի երէցները ուսուցիչները հիւրասիրեցին կարկանդակով: Դժբախտաբար վերամուտի յաջորդ օրն իսկ ապահովական կացութեան սրացումով դպրոցները 36 օր փակուեցան՝ վերաբացուելու համար Նոյեմբերի կիսուն:





ՌԻՍՈՒՑՉԱՑ ՍԵՄԻՆԱՐ

Ուրբաթ, 11 Հոկտեմբերին ուսուցիչները ունեցան շատ այժմեական եւ շահեկան առցանց սեմինար մը, որ մատուցեց Հայկազեան համալսարանի դասախօս դոկտ. Շադիկ Գանտահարեան-Խիտավերտեան: Սեմինարը նախաձեռնութիւնն էր համալսարանի Յարատեւ կրթութեան բաժանմունքին: Մէկ ժամուան ընթացքին, բանախօսը իրեն յատուկ եռանդով ու մասնագիտականութեամբ ներկայացուց «Հոգեխոցի մասին իրազեկուած ուսուցում տալնապալի վիճակներու մէջ» նիւթը:



ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Ապահովական պատճառներով դասաւանդութիւնը առցանց վերածուած ըլլալուն պատճառով, Ուրբաթ, 25 Հոկտեմբերին եւ 1 Նոյեմբերին, Պուրճ Համուտի Հայ աւետարանական երկրորդական վարժարանին մէջ կազմակերպուեցան երկրորդական եւ նախակրթարան բաժիններու աշակերտներու ժամանցային գործունէութիւններ, որպէսզի անոնց միջեւ ընկերային կապը չընդհատուի:





ՌԻՍՈՒՑՉԱՑ ԱՇԽԱՏԱՆԻՍ —

Ուրբաթ, 15 Նոյեմբերին, ուսուցիչները մասնակցեցան Ընկերային եւ զգացական ուսուցման (SEL) մասին արդիւնաւետ աշխատանիստի մը, որ վարեց տիկին Մէրի Կիրինլեան՝ SEL Hub-ի հիմնադիրն ու տնօրէնը: Ան ներկայացուց իր պատրաստած SEL գործիքակազմը, որ կը ներառէ տեսանիւթեր, խաղեր, որմազդեր եւ այլն, որոնք նախատեսուած են ուսուցիչներուն օգնելու, որ կարենան համարկել ընկերային եւ զգացական ուսուցումը դասաւանդութեան ընթացքին: Գործիքակազմը հասանելի է թէ՛ անգլերէնով, թէ՛ արեւմտահայերէնով:



ՎԵՐԱՄՈՒՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ —



Կիրակի, նոյեմբեր 17-ին տեղի ունեցաւ նախապէս յետաձգուած վերամուտի պաշտամունքը առաջնորդութեամբ վեր. Ժ. Ղազարեանի, ներկայութեամբ երկրորդական բաժինի աշակերտներուն եւ ամբողջ անձնակազմին: Աշակերտուի Սէրլի Ռոզի Շահինեան կատարեց փոխասաց ընթերցումը, իսկ տնօրէնը ուղղեց իր սրտի խօսքը:



ԼԻՔԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ —

21 Նոյեմբեր 2025-ին նշեցինք Լիբանանի անկախութեան տօնը, որ առիթ էր անցեալի հիմամբ աւելի պայծառ ապագայ մը կերտելու մասին խորհրդածելու: Տնօրէնը իր խօսքին մէջ նշեց, որ անկախութեան տօնը պէտք է ծառայէ իբրեւ միասնականութեան խորհրդանիշ՝ մարտահրաւերները հաւաքաբար դիմագրաւելու եւ տիրանալու իսկական անկախութեան՝ բոլորիս ջանքերով:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԵՒԵԼՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ —

30 Նոյեմբեր 2025-ին Nooreed հաստատութեան տնօրէն պրն. Էլի Հասսունի ղեկավարութեամբ մեկնարկեց երկրորդական բաժինի աշակերտներու համալսարանական եւ մասնագիտական արեւելումի ծրագիրը: Ամիսներու վրայ երկարող այս ծրագիրը աշակերտները պատրաստեց համալսարանական մասնագիտութեան որոշումին, ինչպէս նաեւ անոնց մէջ զարգացուց համապատասխան հմտութիւններ, որպէսզի երբ աւարտեն դպրոցը՝ աւելի ինքնավստահ անցնին իրենց ուսումնառութեան երկրորդ փուլին:





ԱՌԱՋԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ուրբաթ, 6 Դեկտեմբերին տեղի ունեցավ առաջին ծնողական ժողովը: Տնօրենին բարիգալուստի խօսքէն ետք, տեղի ունեցավ առցանց սեմինար մը, զոր վարեց CDLL կազմակերպութիւնը: Ապա, ծնողք հանդիպեցան ուսուցիչներու հետ քննարկելով իրենց զաւակներուն ուսումնական եւ ընկերային վիճակը:



ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՏՕՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԷՋ



ԿԱՂԱՆԴ Է... —



ՀԱՄԵՐԳ —

Կիրակի, 29 Դեկտեմբերին ՀԱԳ-ի 11-րդ դասարանի շնորհալի աշակերտուհի Անտրիա Տեմիրճեան որպէս Ա. ջութակ ելոյթ ունեցաւ Լիբանանի ազգային երաժշտանոցի մանկական լարային նուագախումբին հետ, ղեկավարութեամբ Պարոյր Թէքեանի: Համերգը տեղի ունեցաւ Հայ աւետ. Ա. եկեղեցիին մէջ: Անտրիան հրաշալի մենակատարումով հանդէս եկաւ նուագելով Օսկար Ռիտինկի Violin Concerto B minor Op. 35-ը, որ արժանացաւ ներկաներուն ջերմ գնահատանքին:



ԹԵՔՈՒԱՆՏՕ —

Արդէն երկրորդ տարին է, որ ՀԱԳ-ի աշակերտներէն ոմանք Թեքուանտոյի մարզումներու կը հետեւին դպրոցին մէջ School of Champions-ի կազմակերպութեամբ եւ մասթըր Նարեկ Պուլտուքեանի առաջնորդութեամբ: 29 Դեկտեմբերին անոնցմէ ոմանք մասնակցեցան ՀԲԼՄ Տեմիրճեան կեդրոնին մէջ կայացած մարզումներուն, որ հիանալի հնարատրութիւն ընձեռեց զարգացնելու իրենց հմտութիւնները, զարգացնելու ինքնավստահութիւնը եւ պատրաստուելու յառաջիկայ մրցումներուն:



Յունուար 2025



ԱՋՆԱԽՈՒՐ ՖԻԼՄԻ ԱԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՇԻՒՆ ՀԵՏ —

ԿԻՍԱՄԵԱՅ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ —



ԱՏԵՆԱՄԱՐՁԱՆՔ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՄԱՍԻՆ —

31 Յունուարի ատենամարզանքին մեծ հաճոյքով ընդունեցինք ՀԱԳ-ի 2020-ի շրջանաւարտ Անթօնի Օպէյտը, որպէս մեր ատենամարզանքի հիւրը: Ան խօսեցաւ հայ մշակոյթը եւ արմատները պահպանելու ու պաշտպանելու կարեւորութեան մասին:





Փետրուար 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ —

6 Փետրուար 2025-ին ՀԱԳ այցելեց եւ երկրորդականի աշակերտներուն ՀԱՀ-ի մասին խօսեցաւ 2004-ի շրջանաւարտ Մեղրի Խօշեան, որ ՀԱՀ-ի ընդունելութեան բաժանմունքի տնօրէնն է:



ԿԸ ՓՈՐՁԵՆՔ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ...



... ԵՒ ՀԱՅԵՐԵՆՈՎ ՄՐԳԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ —



ՏԱՐՐԱԼՈՒԾԱՐԱՆԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ —



ԲԱՆԱՎԷՃԻ ԱԿՈՒՄԲԻ ԱՏԵՆԱՄԱՐԶԱՆՔ —



Նորաստեղծ Բանավեճի ակումբը կազմակերպեց յաջող ատենամարզանք մը, որ աշակերտներ երկու նիւթերու շուրջ հակադիր կարծիքներով փորձեցին համոզել իրենց տեսակէտին ճշդութիւնը: Մին մսակերութեան մասին էր, իսկ երկրորդը, թէ մարզական կեանքով աւելի դիւրին չէ յաջողութեան հասնիլ, քան՝ ուսումով...:

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ —

4-րդ դասարանի աշակերտները իրենց հայոց լեզուի ուսուցչուհիին հետ կտաներով պատրաստեցին արուեստական մագաղաթներ եւ անոնց վրայ տարբեր գծագրութիւններ կատարեցին:





Մ. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆ —

Փետրուար 28-ին նշեցինք Ս. Վարդանանց տօնը, որուն մեր աշակերտները մասնակցեցան արտասանութեամբ ու երգերով: Ուրախ էինք հիւրընկալելու հոգշ. տ. Ազատ արեղայ Ֆիլիկեանը, որ խօսեցաւ Վարդանանցի իմաստին մասին, առնչելով այն մեր այսօրուան՝ ազգային եւ կրօնական ինքութեան մարտահրաւերներուն: Ան նաեւ բացատրեց Բուն Բարեկենդանի իմաստը եւ անոր նշանակութիւնը մեր կեանքին մէջ:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ —

Վարդանանցի յիշատակումէն ետք, աշակերտները ուրախութեամբ նշեցին Բուն Բարեկենդանը: Աշակերտական խորհուրդը պատրաստած էր քերմէսի խաղեր եւ ուտելիքներ: Միջնակարգի աշակերտները ներկայացուցին կարճ զատեշտներ՝ իրենց ծպտումի տարազներուն թեմայով: Օրը լեցուն էր ուրախութեամբ ու ծիծաղով:





Մարտ 2025

ՖՐԱՆՔՑՕՆԻ ՇԱՐԱԹ

Նախաձեռնությամբ եւ կազմակերպությամբ ՀԱԳ-ի ֆրանսերէնի ուսուցչուհի տիկ. Լենա Միլէտերեանի, ամբողջ շաբաթ մը դպրոցին մէջ կը տիրէր ֆրանսական մթնոլորտ՝ երաժշտութեամբ, ճաշով ու ըմպելիքներով, զարդերով ու այլ յարդարանքներով: Շաբաթը ամփոփուեցաւ Ֆրանսայի ու ֆրանսերէնի մասին ընդհ. զարգ. մրցանքով:



ՈՇԻՍԻ ԴՎԵՐՍՈՒՄՆԵՐ



ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Կանանց միջազգային օրուան առթիւ 11-րդ դասարանի աշակերտներ ներկայացուցին հայ եւ օտար նշանաւոր հայ կիներու ներդրումը քաղաքակրթութեան:



ՈՒՍՈՒՑՉԱՑ ՕՐ





Մուսթաֆա Թասսի



Մարո Ունճեան



Ժամալ Ռաշիցի



Իպրահիմ Սիգյանի



Անի Աղայաջեան



Լորիս Տօճապետեան



Սամի Ապիւս



Կարինէ Աճէմեան



Հերմինէ Իսաթուրեան



Գարինա Ալեքսանյան



Վագգէն Բիզանյան



Զաւէն Մարդեան

ԱՅՑԵԼԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽԿԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ

Մարտ 7-ին եւ 8-ին ՀԱԳ-ի Շրջանաւարտից միութիւնը մեծ պատիւ ունեցաւ այցելելու նախկին ուսուցիչներու, որոնք տասնամեակէ աւելի ՀԱԳ-ի մէջ իրենց կեանքէն նուիրած են սերունդներ կրթելու եւ դաստիարակելու: Յուզիչ էր տեսնել անոնց ժպիտը, լսել իրենց յուշերը եւ անձամբ երախտագիտութիւն յայտնելու անոնց (մանրամասն՝ Շրջանաւարտիցի տեղեկագիրին մէջ):



ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀ. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

14 Մարտին տեղի ունեցաւ Ա. – 12-րդ դասարաններու ծնողական ժողովը, մեծաթիւ ծնողներու ներկայութեամբ: Ուսուցիչներու հետ անհատական հանդիպումներէն առաջ ծնողք առիթ ունեցան ունկնդրելու տիկ. Լենա Պաղտոյեանի դասախօսութիւնը «դրական կարգապահութիւն» նիւթով, որմէ ետք դարոցի համալսարանական արեւելումի եւ մասնագիտական կողմնորոշումի խորհրդատու պրն. Էլի Հասսուն ծնողներուն ներկայացուց այդ ուղղութեամբ երկրորդական բաժնի աշակերտներուն հետ կատարուող աշխատանքները:



ՊԱՍՔԷԹՊՈՒԻ ՏԱՔ ՄՐՅԱՇԱՐՔ

ՊԷՅՐՈՒԹ ՄԱՐԱԹՈՆԻ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ —

26 Մարտին հաճոյքը ունեցանք հիւրընկալելու Գարակէօզեան ընկերակցութեան տնօրէնուհի տիկ. Իրինա Լազարեանը եւ Լիբանանի բաժնի տնօրէն պր. Սերոբ Օհանեանը, ընկերակցութեամբ տիկ. Ժանին Դանիէլեանի եւ տիկ. Քրիստին Սիմիթեանի: Հանդիպումը առիթ էր զրուցելու Ընկերակցութեան եւ դպրոցներու գործակցութեան մասին: Նոյն օրը Գարակէօզեանի բժիշկները աշակերտները ենթարկեցին ընդհանուր բժշկական քննութեան:

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ —

26 Մարտին ՀԱԳ-ի 11-րդ դասարանի աշակերտները ընկերակցութեամբ իրենց դաստիարակին ներկայ եղան Ս. Նշան մայր եկեղեցւոյ Արեւագալի արարողութեան, որ հանդիսապետեց Արամ Ա. կաթողիկոսը:



ՈՂՋԵՐԹԻ ՀԱՒԱՔ —



27 Մարտին ՀԱԳ անձնակազմը եւ Տիկնանց օժանդակ մարմինը ողջերթ մաղթեցին Կարօ եւ Յասմիկ Աւետեաններուն, որոնք տարբեր ձեւերով գործակցած են դպրոցին հետ: Աւետեանները իրենց կեանքի նոր փուլը կը շարունակեն Միացեալ Նահանգներու մէջ: Յաջորդ օրը աշակերտներ, դասարանային հաւաքներով հրաժեշտ տուին իրենց դասընկերներ Վարդանին (10-րդ), Վահանին (8-րդ) եւ Միերին (Ա.):



ԳԱՐՈՒՆ —

Մարտ 28-ին ՀԱԳ-ի ամբողջ շրջապատը գարնանային տրամադրությամբ լեցուն էր: Օրը սկսաւ յատուկ պաշտամունքով, ապա մանկապարտէզի ու նախակրթարանի աշակերտները երգով, պարով ու թատրոնով գեղարուեստական ելոյթներ ներկայացուցին: Զանազան բնոյթի ձեռնարկներ, խաղեր, ճիւղ նուագ ու փիլքնիք՝ հաճելի տրամադրութիւն ստեղծեցին դպրոցին մէջ:



BRUNCH —

29 Մարտին Աշրաֆիէի Ni Café-ին մէջ 50-է աւելի շրջանաւարտներ իրարու հետ տեսակցելու եւ միասնաբար հաճելի ժամանակ մը անցընելու լաւ առիթ ունեցան: Ողջոյնի խօսքեր ուղղեցին ատենապետուհի օրդ. Հուրի Քեստենեանը, տնօրէնն ու պատուակալ տնօրէնը:



ՄԱՆԿԱՊԱՐՏԷՐԻ ՊՏՈՅ ԴԵՊԻ ՄԱՐ ՇԱՂԱՅԱ —



Ապրիլ 2025

ԼԵՎԱՄ —

ՀՄԸՄ-ի կազմակերպած աթլետիկամի մրցումներու ծիրէն ներս 5 Ապրիլ 2025-ին մեր դպրոցի աշակերտները գրաւեցին պատուաւոր դիրքեր: Գունդ հրում՝ Գէորգ Պալեան (10-րդ)՝ ոսկի մետալ, իսկ Պետրոս Կիլեքճեան (11-րդ)՝ պրոնզ մետալ: Հեռացատկ՝ Ծիովաննի Սալպաշեան (7-րդ)՝ ոսկի մետալ, իսկ Հրակ Քէօշկերեան (8-րդ)՝ պրոնզ մետալ:



ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ՄՐՅԱՆՔ —

Զ. դասարանի աշակերտուհի Սերենա Հատտատ արժանացաւ Գ. մրցանակի՝ Համազգայինի կազմակերպած միջդպրոցական նկարչական մրցանքին, որ նուիրուած էր Ժանսեմի ծննդեան 105-ամեակին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽՇԱԶԱՐԴԻ ԱՇԽԱՏԱՆԻՍ —

Հայաստանի Յովհ. Շարամբէեանի անուան ժող. արուեստի թանգարանէն պր. Սուրէն Սարոյեան աշակերտներու հետ վարեց հայկական նախշազարդումի աշխատանիստ մը, անոնց սորվեցնելով փայտի վրայ փորագրելու արուեստը: Սոյն աշխատանիստերը արդէն երրորդ տարին ըլլալով կը կազմակերպուին Հայկազեան համալսարանին կողմէ:



ՀԱԳ-Ի ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՏՕՆԷ ԶԱՏԻԿԸ —

Հակթախաղ, պտոյտ, ձեռային աշխատանք, ուրախ ժամանց, Liquid worship առաջնորդութեամբ պատ. Տաթև Պասմաճեանի:





ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Ուրբաթ 25 Ապրիլի ատենամարզանքին, աշակերտներ եւ ուսուցիչներ հաւաքուեցան յիշատակելու հայոց վրայ գործադրուած ցեղասպանութիւնը եւ ոգեկոչելու մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակը՝ ասմունքով, կենդանի պատկերով եւ նուագով: Տնօրէնը իր խօսքին մէջ նշեց, որ երբ ամբողջ ժողովուրդ մը աղօթքով կը միանայ, Աստուած եւ մեր նահատակներուն անմահ հոգիները կը լսեն մեր ձայնը: Ան յիշեցուց, որ մենք կոչուած ենք ըլլալու նահատակներուն ապրող ձայնը, ուստի պարտինք ամէն ինչի մէջ, ամէն քայլափոխի, ապրիլ իմաստալից կեանքով, որպէսզի աշխարհը ոչ միայն տեսնէ ու լսէ, այլ նաեւ հասկնայ: Այդպիսով մեր նահատակները պիտի զգան, որ չեն մոռցուած:



Իսկ 28 Ապրիլին, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի շրջափակին մէջ մեր 8-րդէն 11-րդ դասարաններու աշակերտները միացան լիբանանահայ դպրոցներու իրենց քոյր-եղբայրներուն՝ միասնաբար ոգեկոչելու Ցեղասպանութեան զոհերու յիշատակը: Նուագով ելոյթ ունեցան Անտրիա Տէմիրճեան (11-րդ) եւ Գէորգ Պալեան (10-րդ): Յանուն ՀԱԳ աշակերտութեան ծաղկեպսակ զետեղեցին Պետրոս Կիլեքճեան եւ Ալիսիա Գասպարեան (11-րդ):



ՊՏՈՅՏ ԴԵՊԻ ՊԱԼԼՈՒՄԹ ՊԱԼԱՄԱ —

26 Ապրիլին ՀԱԳ-ի Տիկնանց ընկերային յանձնախումբը ունեցաւ իր տարեկան պտոյտը դէպի Պա՛աթարա կիրճի ջրվէժը եւ շրջակայքի պատմական ու բնական տեսարժան վայրերը:

ՀՄՄՍՄ —

25 – 27 Ապրիլին 11-րդ դասարանէն Ալիսիա Գասպարեան եւ 10-րդէն Մարիա Էլմաճեան եւ Մարիա Պօղոսեան մասնակցեցան Հայկազեան համալսարանի Model United Nations նախագիծին:





ՏԱՂԱՆԴՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ —

2 Մայիս 2025-ին ունեցանք երաժշտական տաղանդներու ներկայացում, որու ընթացքին աշակերտները գեղեցիկ կերպով ներկայացուցին իրենց շնորհքները՝ երգելով եւ նուագելով: Շրջանաւարտ տիկ. Շուշան Արթինեան-Թոքաթեան իբրեւ ժյուրի՝ մասնակիցներէն ընտրեց «Սոնա Ահարոնեան երաժշտական մրցանակ»-ին արժանացող աշակերտը:



ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՅԱՆՔ —

Կազմակերպութեամբ ՀԵՀՈՄ-ի վարչութեան, Շաբաթ, 3 Մայիս 2025-ին Կաթողիկոսարանէն ներս տեղի ունեցաւ «Նուագենք ու վայելենք» միջդպրոցական երաժշտական մրցանքը: ՀԱԳ-ը ներկայացնող երկու շնորհալի աշակերտներն ալ արժանացան պատուաբեր երրորդ մրցանակին: 11-րդ դասարանի աշակերտուհի Անտրիա Տէմիրճեան կատարեց Արամ Խաչատուրեանի «Այեշայի պար»-ը՝ ջութակով, իսկ 10-րդ դասարանէն Գէորգ Պալեան նուագեց Ալեքսանդր Յարութինեանի «Էմիրոմփիթի»-ն՝ թաւջութակով:



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՔԱԿԼ-Ի ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏՈՒՆ

8 Մայիսին ՀԱԳ-ի մանկապարտէզի փոքրիկները, իրենց ուսուցչուհիներուն ընկերակցութեամբ, Մայրերու տօնին առթիւ այցելեցին Հայ տարեցներու տուն, ուր ապաստանած մամիկներուն հիւրասիրեցին խմորեղէն ու պտուղի հիւթ, ինչպէս նաեւ ներկայացուցին տօնական օրուայ յատուկ ուրախ յայտագիր մը, մեր մամիկ-պապիկներուն պարգեւելով հաճելի պահ մը:



ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ (12-րդ) —

9 Մայիսին 12-րդ դասարանի աշակերտները գործունէութիւններով ու աշխուժ, բայց յուզումնալից տրամադրութեամբ հրաժեշտ տուին դպրոցին, ուսուցիչներուն եւ իրենց ընկերներուն:



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԳՈՒՂԱՐ ԳՐԱԴԱՐԱՆ —

Ուրբաթ, 9 Մայիս 2025-ին Հայկական ակումբի անդամները այցելեցին ԳՈՒՂԱՐ գրադարան, ուրկէ հետաքրքրական տեղեկութիւններ ստացան գիրքերու կազմութեան, զարդանաշխման եւ նորոգութեան մասին: Ապա աշակերտները ստացան յատուկ նուէրներ գրադարանի հիմնադիրներուն կողմէ: Աշակերտները միասնաբար ճաշեցին «Պարտէզ» ճաշարանին մէջ:



ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Ուրբաթ, 9 Մայիս 2025-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Ե. Ե. Զ. կարգերէն Սերենա Հատտատ եւ Սերենա Գոլանճեան մասնակցեցան ՀԲԸՄ-ՀԵԸ *Խօսնակ* մշակութային յանձնախումբին կազմակերպած միջդպրոցական արտասանական մրցումին, որ տեղի ունեցաւ Աիրամճեան կեդրոնին մէջ: Անոնց ելոյթները արժանացան ներկաներու մեծ գնահատանքին:



ԱՅՆՃԱՐԻ ՀԱՅ ԱԻԵՏ. ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՐԱԹՈՆ

17 Մայիսին խումբ մը աշակերտներ մասնակցեցան Այնճարի մեր քոյր վարժարանին կազմակերպած մարաթոնին, որ նուիրուած էր Հայկազեան համալսարանի 70-ամեակին:



ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԸ ANIMAL CITY-Ի ՄԵՋ



19 Մայիս



NUTTY SCIENTISTS

20 Մայիսին Nutty Scientists կեդրոնի մասնագէտները դպրոցէն ներս հետաքրքրական գիտական փորձարկումներ կատարեցին բոլոր դասարաններէ աշակերտներու մասնակցութեամբ:



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

23 Մայիս



ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊՏՈՅՑ —

Աշակերտական մեծ զբոսապտոյտը տեղի ունեցավ 28 Մայիսին: Երկրորդականը՝ Swings-ի, իսկ նախակրթարանը՝ Hillhout-ի մէջ:

ԾՆՈՂԱՑ ՄԱՐՄԻՆԻ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ —

22 Մայիս 2025-ին ՀԱԳ Ծնողաց մարմինը Մայրերու օրուան առթիւ նախաճաշի հիւրասիրութիւն մը կազմակերպեց Անթիլիասի Քէյֆ ճաշարանին մէջ: Սեղանները զարդարուած էին գեղեցիկ ծաղիկներով, իսկ մթնոլորտը ուրախ էր՝ հաճելի անակնկալներով: Դպրոցի երաժշտութեան ուսուցիչը՝ պարոն Ղազար Քէօշկերեան եւ երաժիշտ Սեդո Պաղտասարեան մթնոլորտը աւելիով ճոխացուցին գեղեցիկ երգերով, իսկ աշակերտներ Անտրիա Տէմիրճեան (ջութակ) եւ Գէորգ Պալեան (թաւջութակ) նուագեցին «Մայրիկիս» երգը: 12-րդի աշակերտուհիներ Ալբրիլ-Ռոզի Շահինեան եւ Դալար Տազետեան անցնող ամիսներուն նախակրթարանի փոքրիկներուն սորվեցուցած էին Երախուշտա պարը, որ մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ ներկաներէն: Իսկ անակնկալ տեսանիւթերը, որով աշակերտներ իրենց սէրն ու երախտիքը յայտնեցին ծնողաց՝ յուզիչ էին իրենց անմիջական սիրով: Զերմ շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք ներկայ եղան եւ անոնց, որոնք յաջողուցին այս ձեռնարկը:



ՄԵՐ ՇՐՋԱՆԱԻՐՏՆԵՐԸ ՄԵՐ ՄԷՋ

2018-ի շրջանաւարտներ Փերլա Պասէթ եւ Ռըտա Աբուէ հիւրը եղան ատենամարզանքներու եւ իրենց մասնագիտական հմտութիւնները բաժնեկցեցան աշակերտներուն հետ: Փերլան նախակրթարանին խօսեցաւ առողջապահութեան, իսկ Ռըտան երկրորդականին՝ Արհեստական բանականութեան մասին:





┆ BURGER NIGHT ─

Շրջանաւարտից վարչութիւնը 6 ամսուան մէջ արդէն իր երրորդ ձեռնարկը յաջողութեամբ կազմակերպեց: Տարբեր տարիներու մեծաթի շրջանաւարտներ եւ բարեկամներ մէկտեղուեցան դպրոցի բակին մէջ եւ ընթրիքի սեղանի շուրջ ունեցան հաճելի պահեր, ընկերակցութեամբ կենդանի երաժշտութեան, որ կատարեցին Հենրի Իշխանեան եւ Արման Տէր Պետրոսեան:



┆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ ՀԱՆԴԵՍ ─

13 Յունիսի երեկոյեան մեր փոքրաթիւ բայց աշխուժ մանկապարտէզի աշակերտները աղօթքով, երգով ու պարով եռալեզու յայտագիրով մը եզրափակեցին տարին: Հանդէսէն ետք Ծաղիկ դասարանի երեք աշակերտներ՝ **Նուրայ Սայֆէտտին, Մունա ալ Սանտիտ** եւ **Ուաֆա Ալի** հայերէնով իրենց երախտագիտութիւնը յայտնեցին դպրոցին ու ստացան նախակրթարան բարձրանալու իրենց վկայականները:





ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ





ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ —

28 Յունիս 2025-ի երեկոյան ՀԱԳ տուաւ իր 98-րդ հունձըը: Եկեղեցական, կրթական եւ համայնքային պատասխանատուներու ներկայութեամբ ու իրենց ծնողաց եւ ուսուցիչներուն ուրախ եւ յուզուած նայուածքներուն դիմաց ՀԱԳ-ի 6 շրջանաւարտները եկան ամբողջացնելու դպրոցի 1642 շրջանաւարտներու փառանգը: Հանդէսը սկսաւ ժամը 8-ին՝ հանդիսաւոր մուտքով ու շարունակուեցաւ քայլերգերու ունկնդրութեամբ (կենդանի կատարողութեամբ ՀԱԳ լարային եռեակի՝ Անտրիա Տէմիրճեան, Հրակ եւ Գէորգ Պալեաններ), առաջնորդութեամբ եւ ընկերակցութեամբ պարոն Հենրի Իշխանեանի: Հայ աւետ. առաջին եկեղեցիի հովիւ՝ վերապատուելի Ժիրայր Ղազարեանի աղօթքէն ու տնօրէնին ողջոյնի եւ շնորհակալութեան խօսքէն ետք օրուան պատգամը փոխանցեց ՀԱԳ 2004-ի շրջանաւարտ, Հայաստանի ամերիկեան համալսարանի Ընդունելութեանց գրասենեակի տնօրէն օրիորդ Մեղրի Խօշեան, որ յիշելէ ետք իր աշակերտական օրերը, մեծ դրուատիքով ու երախտագիտութեամբ անդրադաձաւ դպրոցի ձգած ազդեցութեան՝ իր կեանքին վրայ, ապա շրջանաւարտներուն յղեց կեանքի մէջ յաջողութեան հասնելու կենսական խորհուրդներ: Աւարտական հանդէսին գեղարուեստական բաժինը կը բաղկանար ասմունքէ՝ «Հոգին հայկական», Ժ. Ս. Յակոբեան (6-րդ դասարանի շրջանաւարտներ Սերենա Հատտատ եւ Հրակ Թերզեան), պարէ՝ «Նազպար» (12-րդի շրջանաւարտներ Սէրլի-Ռոզի Շահինեան եւ Դալար Տագէսեան) եւ նուագէ՝ «Վարդագոյն աղջիկների պարը», «Ղափամա» եւ «Ազգ Փառապանծ» (ՀԱԳ լարային եռեակ): Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն ետք ուղերձներ կարդացին Արին Պաստաճեան (արաբերէն) եւ Սէրլի-Ռոզի Շահինեան (հայերէն): Շրջանաւարտներուն ուղղուած իր հուսկ բանքը արտասանեց տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան, կեդրոնանալով «խաղաղութիւն» բառին վրան, թելադրելով շրջանաւարտներուն, որ կեանքի մէջ ըլլան խաղաղութեան գործակիցներ: Գեղեցիկ ասանդութեան համաձայն



Անտրիա Տէմիրճեան, Հրակ եւ Գէորգ Պալեաններ), առաջնորդութեամբ եւ ընկերակցութեամբ պարոն Հենրի Իշխանեանի: Հայ աւետ. առաջին եկեղեցիի հովիւ՝ վերապատուելի Ժիրայր Ղազարեանի աղօթքէն ու տնօրէնին ողջոյնի եւ շնորհակալութեան խօսքէն ետք օրուան պատգամը փոխանցեց ՀԱԳ 2004-ի շրջանաւարտ, Հայաստանի ամերիկեան համալսարանի Ընդունելութեանց գրասենեակի տնօրէն օրիորդ Մեղրի Խօշեան, որ յիշելէ ետք իր աշակերտական օրերը, մեծ դրուատիքով ու երախտագիտութեամբ անդրադաձաւ դպրոցի ձգած ազդեցութեան՝ իր կեանքին վրայ, ապա շրջանաւարտներուն յղեց կեանքի մէջ յաջողութեան հասնելու կենսական խորհուրդներ: Աւարտական հանդէսին գեղարուեստական բաժինը կը բաղկանար ասմունքէ՝ «Հոգին հայկական», Ժ. Ս. Յակոբեան (6-րդ դասարանի շրջանաւարտներ Սերենա Հատտատ եւ Հրակ Թերզեան), պարէ՝ «Նազպար» (12-րդի շրջանաւարտներ Սէրլի-Ռոզի Շահինեան եւ Դալար Տագէսեան) եւ նուագէ՝ «Վարդագոյն աղջիկների պարը», «Ղափամա» եւ «Ազգ Փառապանծ» (ՀԱԳ լարային եռեակ): Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն ետք ուղերձներ կարդացին Արին Պաստաճեան (արաբերէն) եւ Սէրլի-Ռոզի Շահինեան (հայերէն): Շրջանաւարտներուն ուղղուած իր հուսկ բանքը արտասանեց տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան, կեդրոնանալով «խաղաղութիւն» բառին վրան, թելադրելով շրջանաւարտներուն, որ կեանքի մէջ ըլլան խաղաղութեան գործակիցներ: Գեղեցիկ ասանդութեան համաձայն





1965 տարուան լիբանանաբնակ 4 շրջանաւարտներ ստացան վեթերան շրջանաւարտի վկայագիր եւ յուշատախտակ՝ ձեռամբ հովիւին եւ հոգաբարձութեան ատենապետ պարոն Ներսէս Պաղտոյեանի: Վերապատուելի հովիւին առաքելական օրհնութեամբ ւարտեցաւ երեկոյին պաշտօնական մասը, սակայն պահը երկար շարունակուեցաւ հիրասիրութեան մը ընթացքին:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ BTC ACADEMY-Ի ՀԵՏ

Յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ ՀԱԳ պիտի գործակցի ռուպորթիքսի եւ արհեստագիտական մարզերու մէջ հանրաձանօթ Bekaa Technical Center-ին հետ (տնօրէն դոկտ. Կարօ Փիլաւեան), դպրոցէն ներս երկու պահ ռուպորթիքսի եւ համակարգիչի մասնագիտական դասաւանդութիւնները վարելու համար: Նշենք, որ արդէն երեք տարիէ, զոյգ դասաւանդութիւններն ալ գրեթէ բոլոր դասարաններու կանոնաւոր ուսումնական ծրագիրին մաս կը կազմեն:



ՈՒՍՈՒՑՉԱԿԱՋՄԻ ՊՏՈՅՑ —

Քննութիւնները սրբագրած, նիշերը եւ տեղեկագիրները յանձնած, ւարտական հանդէսն ալ կատարած ուսուցիչները իրենց վաստկած հանգիստը սկսան 30 Յունիսին՝ խմբային շրջապտոյտով մը դէպի Շուֆի շրջանը, այցելելով Տէյր էլ Քամարի պատմական թաղերը, Արզի արգելանցը, Մխթարայի եւ Մուսայի պալատները եւ միասնաբար ունենալով հաճելի ճաշ մը:

Այցելութիւն դպրոց

24 Յուլիս 2025-ին պատիւը ունեցանք հիւրընկալելու CDLL-էն հիւրեր՝ փկ. Սուրայյա Ֆրէմ Պարուպ (նախագահ), փկ. Մարիթթա Ֆրէմ (համահիմնադիր), դոկտ. Ռաֆֆի Քայրէքեան (գործադիր տնօրէն) եւ պրն. Ժորժ Թոհմէ (համահիմնադիր):

Հանդիպումը առիթ էր նախորդ երկու տարիներու գործակցութեան անդրադառնալու, ինչպէս նաեւ արդի մարտահրաւերներու մասին զրուցելու եւ հետագայ ծրագիրներ մշակելու:

Շնորհակալութիւն յարկապէս տրիկին Մ. Ֆրէմին եւ դոկտ. Ռ. Քայրէքեանին, որ մշտական կապով ու գործակցութեան ոգիով կ'ընդառնաջեն մեր բոլոր առաջարկներուն:





Դպրոցի աշակերտության թիվ աճին ուղղուած ՀԱԳ հոգաբարձութան մշակած նոր ծրագիրներէն մին մանկապարտէզի բարելաւումն է:

Այդ նպատակով մշակուած է մանկապարտէզի ամբողջական հիմնանորոգման, վերակահաւորման արդիական մօտեցում եւ կրթամանկավարժական սեմինարներու շարք մը:

Նորոգութիւններու առաջին փուլը աւարտեցաւ Յուլիս 22-ին: Երկու օր ետք դպրոցի եւ եկեղեցւոյ պատասխանատուներու, ուսուցիչներու, ծնողաց, բարեկամներու եւ աշակերտներու ներկայութեամբ տեղի ունեցաւ հիմնովին նորոգուած սրահի բացումը՝ տօնական մթնոլորտի մէջ:

Նորոգութեան աշխատանքները ստանձնած էր ճարտարագէտ Եղիկ Թորոսեան (1995-ի շրջ.) եւ նախկին աշակերտ, interior designer՝ Ռիթա Լեփեճեան:



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ԱԿՈՒՄԲ



Թեև լեռները սասանին ու բլուրները շարժին, բայց իմ անսասան սերս քեզի հանդեպ պիտի չխանգարուի... «Մի՛ վախնար, որովհետև ես քեզի հետ եմ» կ'ըսե Տերը:

Այս խոստումը իրականութիւն դարձաւ մեզի համար այս տարի, երբ մեր ուսումնական տարին սկսանք խառնաշփոթութեան մէջ, բայց իրար կը քաջալերեինք Աստուծոյ խոստումներուն վստահելով: Այս տարի մեր գործունէութիւնները սահմանափակուեցան ապահովական կացութեան պատճառով:

ա. Դեկտեմբերին ունեցանք մեր տարեկան սննդահաւաքը: Աշակերտներ հաւաքեցին տեսակաւոր սննդեղէն, որ բաժնուեցաւ 4 ընտանիքի:

բ. Մարտին ունեցանք մեր համատեղ retreat-ը ԶԶԱԿ-ի մէջ Պատանեացի խումբին հետ: Պատգամաբերն էր տիկին Հռութ Եունիսես, որ ներկայացուց «Ինչպէ՞ս կրնամ վստահ ըլլալ թէ Աստուած ճշմարտութիւն է, եւ ինչպէ՞ս կրնամ հետեւիլ իրեն» նիւթը:

գ. Մայիսին այցելեցինք Այնճարի հայ ակետ: գիշերօթիկը եւ փոքր նուէր մը (որ աշակերտներուն կողմէ հաւաքուած էր) յանձնեցինք տնօրէնութեան, որպէս փոքրիկ գնահատանք անոնց ծառայութեան:

Հակառակ ապահովական ու ընկերային տագնապներուն, ամբողջ սրտով կը գոհանանք Աստուծմէ՝ անոր մշտական խնամքին եւ պաշտպանութեան համար:



ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ



Ընթացիկ տարեշրջանին ՀԱԳ հայկական ակումբը ուներ հետեւեալ վարչութիւնը. Սելին Աստուրեան՝ ատենապետ, Արին Պաստաճեան՝ ատենադպրուհի: Ակումբի խորհրդատուն էր տիկ. Արփի Գույումճեան:

Տարուան ընթացքին Հայկական ակումբը ունեցաւ հետեւեալ գործունէութիւնները.

Փետրուար 28-ին՝ Վարդանանց տօնակատարութիւն: Հիւր պատգամախօսն էր հոգեշնորհ տէր Ազատ արեղայ Ֆիլիքեան: Աշակերտներ ելոյթ ունեցան ասմունքելով, երգելով ու նուագելով:

Մարտ 7-ին, Ոսուցչաց տօնին առթիւ, ակումբի անդամները պատրաստեցին Էջանիշեր՝ Նուռի պատկերներով, եւ նուիրեցին ուսուցիչ-ուսուցիչներուն:

Ապրիլ 25-ին կատարուեցաւ Հայոց վրայ գործադրուած Ցեղասպանութեան ոգեկոչում՝ մասնակցութեամբ բոլոր աշակերտներուն: Օրուան պատգամը յղեց տնօրէնը:

Մայիս 8-ին, այս անգամ Մայրերու տօնին առթիւ, ակումբի անդամները յատուկ բացիկներ պատրաստեցին, որոնց մէջ 7 - 10-րդ դասարաններու աշակերտները մաղթանքներ գրեցին եւ նուիրեցին իրենց մայրերուն:

Ուրբաթ, 9 Մայիս 2025-ին ակումբի անդամները այցելեցին ԳՈՀԱՐ գրադարան, ծանօթացան գիրքերու կազմումի եւ նորոգումի աշխատանքներուն: Ապա գրադարանի հիմնադիր Խաչատուրեան եղբայրներուն կողմէ նուէրներ ստացան՝ երգարան, խտասալիկ, նօթատետր, դրօշակ, ապա միասնաբար ուղղուեցան եւ ճաշեցին Պուրճ Համուտի «Պարտեզ» ճաշարանին մէջ:



ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Ընթացիկ տարեշրջանի Աշակերտական խորհուրդը կազմուեցաւ առանց ընտրութեան՝ երկրորդ ցանկի մը չգոյութեան պատճառով: Վարչապետն էր Աստրիա Տէմիրճեան (11-րդ), իսկ գործակիցները՝ Դալար Տաքետեան եւ Կրէյս Հալաճեան (12-րդ), Արտա Գրիգորեան (11-րդ), Լիանա Շահինեան եւ Մարիա Պօղոսեան (10-րդ), Միրա Ղորղորեան (9-րդ), Կասիա Քէշիշեան (8-րդ), Լարի Քէօշկերեան (7-րդ):

1. Բարեկենդան 28 Փետրուար 2025

Տարուան ամենէն յատկանշական ձեռնարկը եղաւ Բարեկենդանը — եւ մենք ամբողջ հոգիով նուիրուեցանք անոր: Փետրուար 27-ին՝ մեծ տօնակատարութեան նախորդ օրը, առաւօտեան ժամը 7:30-էն սկսած պատրաստութիւններ տեսանք մինչեւ երեկոյեան ժամը 6: Պատրաստեցինք զուարճալի խաղեր, նաեւ Հայկազեան համալսարանէն փոխ առինք կարգ մը խաղեր: Ունէինք վեց մեծ գեղեցիկ տաղաւարներ, նաեւ ձեռակերտ «Ֆորթպոլթ» մը՝ որ բոլորին սիրելի անկիւնը դարձաւ: Քաֆէթերիայի տիկիներուն օգնութեամբ պատրաստեցինք համադամ սանտուիչներ եւ քաղցրեղէններ: Ամէն դասարան ներկայացուց իրական կեանքէ քաղուած հետաքրքրական կեանքի պատկեր մը: Չուարճալի, ստեղծագործական եւ իրապէս տպաւորիչ էին բոլորն ալ: Օրը լեցուն էր դրական մթնոլորտով: Աշակերտներուն եւ ուսուցիչներուն ժպիտը ու զուարճութիւնը՝ ամենէն լաւ պարգեւներն էին մեզի համար:

2. Գարնանամուտի տօնի աշակցութիւն

Թէեւ մենք ուղղակի կազմակերպիչ չէինք Գարնանամուտի տօնին, բայց մեծ հաճոյքով աշակցեցանք ուսուցիչներուն՝ խաղերու կազմակերպումով:

3. Դպրոցական զբօսապտոյտ 28 Մայիս 2025

Սա այն հանգիստ, ուրախ օրերէն մէկն էր, որ բոլորս կարօտով կը սպասենք: Որպէս Աշակերտական խորհուրդ մեր վրայ առինք ճաշի պատրաստութիւնը՝ միսերը գնել եւ շամփուրելէն մինչեւ եփելն ու սեղանները պատրաստելը: Ամէն մէկս ստանձնած էր պարտականութիւն մը: Նուազեցինք, միասնաբար վայելցինք համեղ խորովածը, անդադար ծիծաղեցանք ու պարզապէս վայելցինք պահը: Իտեալական առիթ էր դպրոցական տարեշրջանը միասին փակելու:

4. Աշակերտներու աշակցութիւն

Բան մը, որ հպարտութեամբ կը յիշենք (թէեւ փոքր թուի), այն էր, որ Մայիս 2-ի գրաւորները չեղեալ հռչակուեցան շնորհիւ մեր խնդրանքին, որովհետեւ կը զուգարհայէին բազմազբաղ նախօրերու: Անիկա դիւրացուց աշակերտներուն կեանքը այդ շաբաթ, ու մենք ալ ուրախ էինք, որ կրցանք լսելի եւ օգտակար ըլլալ:

ԾՆՈՂԱՑ ՄԱՐՄԻՆ



Աստուծոյ կամքով եւ առաջնորդութեամբ՝ ՀԱԳ Ծնողաց մարմինը այս տարի եւս կարողացաւ դպրոցի տնօրէնութեան հետ գործակցելով յաջողօք կարգ մը ծրագիրներ:

Ծնողաց Մարմինի անդամներն են՝ տիկ.ք Վերա Հատտատ (ատենապետ), Ալին Պօղոսեան, Սիլվա Տաքետեան, Հուրի Ղազարեան, Յասմիկ Աւետեան, Յասմիկ Գոճայեան, Վանեսա Ֆրանսիս, Սաթենիկ Աբրահամեան եւ Տեարք Մարտիկ Շէքերճեան եւ Եղիկ Թորոսեան:

2024-2025 տարեշրջանին իրականացան հետեւեալ ծրագիրները.

Վերամուտի հիւրասիրութիւն աշակերտներուն: Ուսուցչաց տօնին առթիւ ուսուցչարանին նուիրուեցան գորգեր եւ կատարուեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Մայիս 22-ին՝ Մայրերու օրուան առթիւ, կազմակերպուեցաւ նախաճաշ մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին աշակերտները՝ պարով, մաղթանքներով եւ նուագով: Պր. Ղազար Քէօշկերեան՝ ՀԱԳ-ի երգի ուսուցիչը, գեղեցիկ երգերով ճոխացուց մթնոլորտը:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս ամավերջի հանդեսին ճոխ հիւրասիրութիւն կազմակերպուեցաւ բոլոր ներկաներուն համար:

Այս բոլորէն անկախ, Ծնողաց վարչութիւնը յաճախակի հանդիպումներ ունեցաւ տնօրէնութեան հետ եւ արծարծեց շատ մը հարցեր, որոնք կը վերաբերէին աշակերտական կեանքին՝ ըլլայ կրթական կամ ընկերային, մանաւանդ որ տարեւերջը լի էր տագնապով ու անորոշութեամբ:

Աստուծոյ փառք կու տանք այս բոլորին համար եւ կ'աղօթենք, որ Տէրը առատապէս օրհնէ ՀԱԳ-ն ու անոր համար գործող բոլոր նուիրեալները:



ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆՂԱԿ ՄԱՐՄԻՆ



Այս տարի եւս Օժանդակ մարմինը դպրոցէն ներս իրականացուց կարգ մը գործունեութիւններ:

Անդամներն են. տիկնայք Վերա Հատտատ (ատենապետ), Ալին Պողոսեան (խորհրդատու), Գոհար Գրիգորեան, Սայրի Գալուստեան (պահեստապետ), Յասմիկ Աւետեան (ատենադպիր), Սիլվա Տաքսեան (հաշուապահ եւ պահեստապետ), Սիլվա Լեփեճեան, Վիքի Պապիկեան (պահեստապետ), Շողիկ Պապեան, Արմինէ Պետրոսեան, Զրիստիկ Վարդանեան, Շուշիկ Սարեան եւ Յասմիկ Գոճայեան:

Տարուայ մեկնարկին վերանորոգուեցաւ քաֆէթերիան, որ նոր շունչ հաղորդեց աշխատանքներուն եւ աւելի բարձր որակ՝ ծառայութիւններուն: Տիկնաներուն սիրայօժար եւ ժրջան աշխատանքին շնորհիւ աշակերտներուն տրամադրուեցաւ համեղ եւ սննդարար ուտելիք: Մարմինը կազմակերպեց նաեւ հետեւեալները.

Տարբեր առիթներով աշակերտներուն հիւրասիրութիւն սանտուիչով կամ քաղցրեղէնով:

Ամանօրեայ խրախճանք, որու ընթացքին բոլոր աշակերտներուն բաժնուեցան նուէրներ:

Սուրբ Չատկուայ տօնին առթիւ ճոխ հիւրասիրութիւն:

Ֆրանքֆոնի ամսուայ ընթացքին պատրաստուեցան ֆրանսական այլազան ուտեստներ:

Գարնանային փառատօնի հիւրասիրութիւն:

Օրական դրութեամբ աշակերտութեան վաճառուեցան զանազան ուտեստներ՝ պատրաստուած տիկնաներուն կողմէ՝ առողջապահական եւ սննդականոնի բոլոր նկատառումներով:

Ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս սոյն մարմինին միջոցաւ դպրոցիս բարեկամ Լոս Անճելըսի հայ մայրերու եւ ուսուցչուհիներու միութիւնը մեծապէս օգտակար եղաւ աշակերտներուն մատուցուող ծառայութիւններուն:



ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ



ՀԱԳ Տիկնանց ընկերային յանձնախումբը յարատեւօրէն կը շարունակէ իր աշխատանքը առաւելաբար ընկերային ձեռնարկներով հանրայնացնելով դպրոցին անունը եւ նիւթապէս օժանդակելով աշակերտական կեանքի բարելաւումին:

Յանձնախումբի անդամներն են. տիկնայք Ռուբինա Արթինեան (ատենապետ), Լիլա Արթինեան, Արուս Լեպլեպճեան, Փաթիլ Խտրլարեան, Մարալ Մխսեան եւ Սիլվա Տաքսեան:

2024-2025 տարեշրջանին յանձնախումբը կազմակերպեց հետեւեալ երկու պտոյտները.

26 Ապրիլ 2025-ին դէպի Աքուրա՝ «Սայիտթ ալ հապս», «Պալու՛աթ Պալա՛ա», Ժպէլլի մոմի թանգարան եւ ճաշարան «Ապու Ժոզէֆ»՝ Ժպէլլ:

12 Յուլիս 2025-ին՝ դէպի Տնկիէ, «Քասր ալ ահլամ», «ժապալ 40» եւ ճաշարան «Ժարր Ռաշի՛ին»:



ԲԱՆԱՎԷՃԻ ԱՎՈՒՄԲ



Նորաստեղծ ակումբին նպատակն է աշակերտներուն հնարաւորութիւն տալ իրարու տեսակէտը լսելու եւ իրենց կարծիքը արտայայտելու: Այդ նպատակով աշակերտները ծանօթացան բանավեճի հիմնական դրոյթներուն:

Ակումբին կ'անդամակցէր 27 աշակերտ: Յանձնախումբի անդամներն էին Վարդան Աւետեան, Ալիսիա Գասպարեան, Նոյեմի Ֆրանսիս եւ Ալի ժապէր: Խորհրդատու՝ տիկին Մարիա Խանճեան:

21 Փետրուար 2025-ի ատենամարզանքին կազմակերպուեցաւ բանավեճի նստաշրջան մը, որուն ընթացքին բանավիճող խումբեր թեր ու դեմ կարծիքներ արտայայտեցին հետեւեալ նիւթերուն մասին. «Լաւ ուսանող, թե՞ լաւ մարզիկ»: «Մարդիկ պե՞տք է կենդանիներ ուտեն»: Ամեն մասնակից ստացաւ իր տեսակէտը արտայայտելու հնարաւորութիւն, իսկ չորս աշակերտ ստացաւ առիթ՝ բանավեճի ձեւով ներկայացնելու իր տեսակէտը ամբողջ վարժարանին եւ դատաւորներուն առջեւ:

Աշակերտները ունեցան հնարաւորութիւն ուսումնասիրելու նիւթը, հարստացնելով իրենց գիտելիքները: Անոնք լսեցին նաեւ հակառակ կողմի տեսակէտը եւ զարգացուցին իրենց կարողութիւնը արտայայտուելու, նոյնիսկ եթէ համաձայն չէին: Այսպէսով զարգացաւ փոխըմբռնման մթնոլորտ:

Ապագային անհրաժեշտ է յատուկ դասընթացք կազմակերպել եւ հրաւիրել հանրային խօսքին մէջ փորձառու մասնագետներ, որ աշակերտներուն օգնեն աւելի լաւ բանավիճող դառնալու:

Իրրել առաջին փորձ բաւարար կը գտնենք կատարուածը եւ ժամանակի նեղ պայմաններուն մէջ կրցանք մեր հանդիպումներով օգտակար ըլլալ իրարու:



ՌԻՍՈՒՑՉԱՅ SUNSHINE ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ




Ուսուցչական արտադասարանային գործունեութիւններ կազմակերպող սոյն մարմինը կը բաղկանայ տիկնայք Սոնա Մուղալեանէ՝ ատենապետ, Հռութ Եունիսէսէ, Նա'ամաթ Էլ Խաթիպէ, Մարիա Խանճեանէ, Մարիա Ռահպանիէ եւ Նայիրի Նոհրայէ:

21 Դեկտեմբերին ունեցանք Ամանորի եւ Սուրբծննդեան աւանդական ընթրիքը «Timo Gastro Bar»-ին մէջ, ժալ էլ Տիպ:

26 Փետրուարին եւ 22 Ապրիլին կատարուեցաւ քաղցրաւենիքի եւ կարկանդակի հիւրասիրութիւն՝ ուսուցչարանին մէջ:

30 Յունիսին միօրեայ շրջագայութիւն մը կազմակերպուեցաւ դէպի Շուֆ, այցելելով Քասր Մուսա եւ Պարուքի Մայրիի արգելոցը, ապա Շալլալաթ Նապա'ա Մերշետ ճաշարանին մէջ հաճելի ժամանակ մը անցուցինք: Դժուար տարեշրջանի մը աւարտին, այս շրջագայութեամբ, ուրախ աւարտով մը նշուեցաւ տարեփակը եւ ուսուցիչներ մեկնեցան արժանի հանգիստի:



ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ



Երկար տարիներու դադարէ ետք, ՀԱԳ ունեցաւ իր նորակազմ վարչութիւնը ատենապետութեամբ Հուրի Քեստենեանի (1992-ի շրջ) եւ հետեւեալ կազմով. Հուրի Բիւզանդեան (1992-ի շրջ), Յոլակ Թորոսեան (2003-ի շրջ), Յակոբ Գեորգեան (2005-ի շրջ), Մարինէ Շէհիրեան (2014-ի շրջ), Մեղրի Պաղտոյեան (2014-ի շրջ), Կասիա Գազանճեան (2017-ի շրջ), Նարե Գարամանուկեան (2022-ի շրջ), Էլվիրա Չէյթունցեան (2022-ի շրջ):

2025 Յունուարէն - Յունիս վարչութիւնը կազմակերպեց հետեւեալ գործունէութիւնները.


Ա. Brunch 29 Մարտին, Ni Café-ին մէջ, ուր ակելի քան յիսուն շրջանաւարտներ առիթ ունեցան հանդիպելու եւ ծանօթանալու վարչութեան ծրագիրներուն:

Բ. Վերերան ուսուցիչներու այցելութիւն Ուսուցչաց տօնին առթիւ: Տօնին պատշաճ նուէրներով վարչականներ այցելեցին 10 եւ ակելի տարիներ ծառայած հետեւեալ ուսուցիչներուն բնակարանները. դոկտ. Չաւեն Մարրիլեան, դոկտ. Սամի Ատհամ, օրդ. Հերմիէ Խաթունեան, պրն. Իպրահիմ Սիտանի, տիկ. Անի Աղպաշեան, օրդ. Մաքօ Ունճեան, պրն. Վազգէն Բիւզանդեան, տիկ. Լորիս Տօնապետեան, պր. Մուստաֆա Թասսի, տիկ. Գարիսա Ալեքսանտրեան, տիկ. Ժամնալ Ռաշիտի եւ տիկ. Կարինէ Աճեմեան:

Գ. Burger Night, 7 Յունիսին, դպրոցի շրջափակին մէջ շրջանաւարտներ եւ բարեկամներ հաճելի ժամանց մը ունեցան կենդանի երաժշտութեամբ եւ խաղերով:



Հիատարակութիւններ



ՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵՃԻ

2024-2025 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Հայ աւետարանական գուլճի այս տարեշրջանը սկսաւ վախով, տագնապով ու անորոշութեամբ: Ռմբակոծումները թէւ ուղղակի չվնասեցին դպրոցին կամ աշակերտներուն, սակայն ստեղծեցին անդամալուծող վիճակ մը, որ փառք Աստուծոյ Նոյեմբերին աւարտեցաւ եւ բնականոն աշխատանքը աստիճանաբար վերագտաւ իր հունը: ՀԱԳ անգամ մը եւս վերահաստատեց պատերազմական վիճակներու մէջ Ամենակալին օրհնութիւններուն առատութիւնը իր կեանքին մէջ:

ՎԵՐԱՄՈՒՏ

2024-2025 տարեշրջանը սկսաւ 23 Սեպտեմբեր 2024-ին (ծրագրուածէն քանի մը օր ետք) եւ պաշտօնապէս աւարտեցաւ 18 Յունիս 2025-ին:

Տարեշրջանի ընթացքին ունեցանք 119 առկայ դասաւանդութեան եւ քննութեան օրեր:

72 օր դպրոցը փակուեցաւ ապահովական, արձակուրդի, քննութեանց միջեւ դադարի եւ այլ անակնկալ պատճառներով (նախարարութեան հրամանով):

Ապահովական պատճառով կորսուած 36 օր առկայ դասաւանդութիւններուն մեծ մասը, ըստ կարելոյն, փոխարինուեցաւ առցանց դասաւանդումով:

12-րդ դասարանի ուսուցիչներ յաւելեալ դասաւանդութիւն կատարեցին (արձակուրդի կամ շաբաթ օրեր) ամբողջացնելու համար պետական քննութեանց ծրագիրը:

Ապահովական պատճառով դպրոցը փակ մնացած 36 օրէն 28-ին գրասենեակները բնականոն գործեցին:

Դպրոց վերադարձէ շաբաթներ ետք իսկ, կարգ մը աշակերտներ շարունակեցին առցանց հետեւիլ դասարանի բացատրութեան՝ ճամբորդութեան եւ քաղաքէն դուրս այլուր ապաստանած ըլլալու պատճառով: Սա կարելի դարձաւ ամբողջ շէնքը համացանցի արագ կապի հասանելի դարձնելով եւ համապատասխան սարքերու գնումով:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոգաբարձութիւնը, տարուան ընթացքին, կրթական մարզի երկու տարբեր մասնագէտներու հետ գործակցեցաւ դպրոցի հետագայ տարիներու զարգացման նիւթով: Օրիորդ Սարին Խաչիկեան Փետրուարէն Ապրիլ լայնածաւալ հանդիպումներ ունեցաւ դպրոցի բաղկացուցիչ բոլոր մարմիններուն եւ անհատներու հետ եւ համապատասխան ծրագիր մը ներկայացուց հոգաբարձութեան:

Իսկ դոկտ. Թալին Մըրլեան նոյնպէս երկամեայ ծրագիր մը ներկայացուց, որով 2025 Հոկտեմբերէն սկսեալ ինք պիտի կազմակերպէ եւ վարէ աշխատանիստեր, հիմնական ուղղութիւն ունենալով կրթական ծրագրի արդիականացումը եւ յարակից նիւթեր:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԹԻԻ

Աշակերտութեան թիւը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը, որ տարեվերջին ութով նուազ էր անցեալ տարեշրջանէն:

Բաժին	Աշակերտութիւն		Դասարաններ
	Տարեսկիզբ	Տարեվերջ	
Մանկապարտէզ	14	13	3
Նախակրթարան	45	42	6
Միջն.-երկրորդ.	53	49	3 + 4
ԸՆԴՀ. ԳՈՒՄԱՐ	112	104	16

Թիւի նուազումին պատճառները երկուք են՝ ապահովական եւ գաղթ:

Ունեցանք 26 ոչ-հայ աշակերտներ (25%) հետեւեալ դասարաններուն մէջ. մանկապարտէզ (7 հոգի - 54%), նախակրթարան (13 հոգի - 31%), միջնակարգ եւ երկրորդական (6 հոգի - 12%): Ասոնցմէ 18-ը (69%) կանոնաւորաբար կը հետեւին հայերէնաւանդ դասերուն: Խառն ամուսնութեանց զաւակներու ընդհանուր թիւը 9 է (8.5% - 5 ընտանիք). 4 աշակերտի հայրը հայ է (2 ընտանիք), իսկ 5-ինը՝ մայրը հայ (3 ընտանիք): Մէկ աշակերտ քառորդ հայ է:

Աշակերտութեան աշխարհագրական բաժանումը ունէր հետեւեալ պատկերը.

Շրջան	Թիւ	համեմատութ.
Պէյրուս կեդրոն եւ արեւմտ. արուարձաններ, Աշրաֆիէ, Մար Մխայէլ	28	26.4%
Պուրճ Համուտ, Տքուանէ	28	26.4%
Տորա, Հանքաշ, Ամանուս, Պաուշիէ, Ֆանար, Ռաուտա ժտէյտէ, Զալքա, Անթիլիաս, Պսալիմ, Մզիէր,	16	15%
Մազրա'աթ Եաշուի	20	19%
Տպայլէ, Նաքքաշ, Աուքար	5	4.7%
Մանսուրիէ, Այն Սաատէ,		
Պրումմանա	2	1.9%
Այն էլ Ռմմանէ, Շիահ	7	6.6%

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ԸՆԴՀ. ՊԱՇՏՕՆԵՈՒԹԻՒՆ

Դպրոցի ուսուցչակազմի եւ պաշտօնէութեան միջին տարիքը 53 է. միջին ընդհ. փորձառութիւնը՝ 25 տարի: Ամբողջ անձնակազմի 61,7%-ը կը պատկանի իգական սեռին, 38,3%-ը՝ արական:

Բնոյթ (ամբողջ անձնակազմ)

Վարչական պաշտօնէութիւն*	6	
Մնայուն ուսուցիչներ	15	46,9%
Այցելու ուսուցիչներ	17	53,1%
Դռնապան, տնտես, մաքրող	4	
Վարորդ	5	

ԸՆԴՀԱՆՈՒՐ 47

* Տնօրէնն ու պատ. տնօրէնը նաեւ կը դասասանդեն

Ազգութիւն (ամբողջ անձնակազմ)

Հայ	34	72,4%
Արաբ	11	23,4%
Այլ	2	4,2%

Ուսց./պաշտ. ակադ. աստիճաններ

PhD	2	5,3%
MA, MS, Maitrise, BA+TD	12	31,6%
BA, BS, License	18	47,9%
Մանկվրժ./վարչրկ. որակաւորում	3	7,9%
Այլ	3	7,9%

Ուսց./պաշտ. փորձառութիւն ըստ տարիներու

	Ընդհ.	ՀԱԳ-էն ներս
– 5	3	10
5 – 10 տարի	2	5
11 – 15 տարի	1	10
16 – 20 տարի	8	2
21 – 25 տարի	5	3
26 – 30 տարի	7	3
31 – 35 տարի	7	4
36 – 40 տարի	2	
41 – 45 տարի	1	
46 – 50 տարի	1	
60+	1	1

Տարուան աւարտին պաշտօնէն հրաժարեցան տիկ. Նազիկ Քեչեճեան (Հանգստեան կոչում եւ Հայաստան մեկնում): Պրն. Ռամատան Հաշում փոխարինուեցաւ այլ՝ մնայուն ուսուցիչով: Տարուան ընթացքին վարորդ Հրաչ Ակորճեան հրաժարական տուաւ, տեղը պաշտօնակոչուեցաւ պր. Մովսէս Պազգալեան:

Տեղի ունեցան երկու ընդհանուր ծնողական ժողովներ, ինչպէս նաեւ շարք մը դասարանային եւ բազմաթիւ անհատական հանդիպումներ ծնողներու հետ:

Ուսուցչական կազմի ժողովները եղան թէ՛ ընդհանուր, թէ՛ փոքր խումբերով եւ անհատական հանդիպումներով:

Ուսուցչաց խորհուրդը պարբերաբար գումարեց աշխատանքային ժողովներ, որոնց ընթացքին առնուեցան կրթական կեանքի ու դրուածքի առնչուող կարեւոր որոշումներ:

Eschool առցանց հարթակը շարունակեց գործարկուիլ:

Հաւուրտ Գարակէօզեան հիմնարկութիւնը աշակերտութեան եւ անձնակազմին համար կատարեց առողջապահական քննութիւններ:

Ամբողջ ուսուցչակազմը մասնակցեցաւ հետեւեալ աշխատանիստերուն.

Պատերազմական վիճակներու մէջ աշակերտներու հոգեկան առողջութիւն (11 Հոկտ. – դոկտ. Շաղիկ Խուտավերտեան – առցանց):

Ընկերային եւ զգացական հմտութիւններու զարգացում (15 Նոյ – դոկտ. Մէրի Ղազարեան):

Խումբ մը ուսուցիչներ մասնակցեցան CDLL հաստատութեան Mental Health-ի առցանց աշխատանիստերու շարքին:

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Գոլէճի հիմնական առաքելութեան հետամուտ՝ ունեցանք կանոնաւոր առաւօտեան պաշտամունքներ. նախակրթարան եւ մանկապարտէզ՝ երկուքական օր, եւ միացեալ՝ մէկ օր, պարբերականութեամբ: Մանկապարտէզը նոյնպէս ունեցաւ իր ամէնօրեայ պաշտամունքները: Պաշտամունքները վարեց տիկին Հռութ Եունիսէս: Ունեցանք նաեւ հիւր պատգամաբերներ: Ութ կիրակնօրեայ աշակերտական պաշտամունքներու ներկայ եղան երկրորդական բաժնի հայ աշակերտները: Ասոնց մէջ յատուկ էին վերամուտի եւ շրջանաւարտից նուիրման պաշտամունքները:

Ս. Յարութեան տօնին առթիւ պատ. Տաթեւ Պամաճեան կազմակերպեց տպաւորիչ Liquid Worship մը:

Հոգեւոր աճման համար շարունակուեցան Սուրբ գիրքի դասասանդութիւնները. միջնակարգ-երկրորդական բաժնի աշակերտներէն կարեւոր թիւ մը մասնակցեցաւ ՀԱԱ եկեղեցւոյ Պատանեաց շարժումին: Գործեց Աստուածաշունչի ակումբը: Եկեղեցւոյ հովիւր մօտէն հետեւեցաւ աշակերտներուն, նաեւ 11-րդ դասարանին դասասանդեց «Աշխարհի կրօններ» դասանիւթը:

ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ակադեմական

2024 Մայիս 13 – 18 12-րդի աշակերտները մասնակցեցան հայ աւետ. վարժարաններու միացեալ փորձքննութիւններուն, որ այս տարի, բացառաբար միատեղ

զկատարուեցաւ: Պրէզօվէի քննութիւնը ջնջուած ըլլալուն, 9-րդ դիւնները զերծ կացուցուեցան այս քննութիւններէն, փոխարէնը տարեվերջին ունեցան ամավերջի քննութիւն:

Յուլիս 9 – 15 աւարտական դասարանէն ետքը աշակերտներ մասնակցեցան պաքալորեայի պետական քննութիւններուն, արձանագրելով 100 առ 100 պատուաբեր յաջողութիւն մէկ «շատ լաւ» եւ մէկ «լաւ» յիշատակութեամբ:

Սա յաջորդաբար ու անընդմէջ 9-րդ տարին է որ ՀԱԳ կ'արձանագրէ 100 առ 100 յաջողութիւն պաքալորեայ քննութիւններուն:

Հոգաբարձութեան որոշումով մասնագիտական եւ համալսարանական արեւելումի Nooreed կայքի տնօրէն Էլի Հասսուն, դպրոցէն ներս անհատական եւ խմբային հանդիպումներ ունեցաւ երկրորդական բաժնի աշակերտներուն հետ, համալսարանական ճիւղի ընտրութեան եւ յարակից նիւթերու շուրջ վարելով աշխատանիստեր եւ կատարելով խորհրդատութիւն: Ան նաեւ կազմակերպեց համալսարաններու ներկայացուցիչներու այցելութիւն:

Արտադասարանային եւ արտադպրոցական

Շարունակեցին գործել Սուրբ գիրքի եւ Հայկական ակումբները եւ Աշակերտական խորհուրդը, կազմուեցաւ Բանավէճի ակումբ:

Սուրբ գիրքի ակումբ

(պատասխանատու՝ տրիկին Հռութ Եունիսէս)

Դիւանի անդամներն էին Սէրլի-Ռոզի Շահինեան, Դալար Տաքեսեան ու Կրէյս Հալաճեան: Տարուան ընթացքին անոնք ունեցան զանազան գործունէութիւններ, Սուրբձննդեան տօնին առթիւ կատարեցին նպաստի բաշխում, Մարտին ՔՋԱԿ-ի մէջ ունեցան իրենց տարեկան հաւաքը, իսկ Մայիսին այցելեցին Այնճարի գիշերօթիկը:

Հայկական ակումբ

(պատասխանատու՝ տրիկին Արփի Գոյումճեան)

Դիւանի անդամներն էին ա.պետ՝ Սէլին Աստուրեան, ա.դպիր՝ Արին Պաստաճեան: Տարուան ընթացքին անոնք կազմակերպեցին ատենամարզանքներ Վարդանանցի եւ Ապրիլ 24-ի նուիրում, նաեւ այցելեցին ԳՈՀԱՐ գրադարան:

Բանավէճի ակումբ

(պատասխանատու՝ տրիկին Մարիա Խանճեան)

Դիւանի անդամներն էին՝ Վարդան Աւեսեան, Ալիսիա Գասպարեան, Նոյեմի Ֆրանսիս եւ Ալի Ժապէր: Սովորական հանդիպումներէն անկախ ակումբը կազմակերպեց աշակերտական բանավէճի ձեռնարկ մը:

Աշակերտական խորհուրդը կազմուեցաւ առանց ընտրութեան՝ երկրորդ ցանկի մը չզոյութեան պատճառով, վարչապետութեամբ Անտրիա Տէմիրճեանի (11-րդ): Աշակերտները կազմակերպեցին Բարեկենդանի տօնակատարութիւնը, 28 Փետրուարին, մեծապէս օժանդակեցին Գարնանամուտի տօնի եւ աշակերտական զբօսապտոյտի կազմակերպման:

Թերուանտոյի արտադասարանային գործունէութիւնը երկրորդ տարին ըլլալով շարունակուեցաւ School of Champions-ի գործակցութեամբ եւ մասքըր Նարեկ Պուլտուքեանի առաջնորդութեամբ: Կը մասնակցին նախակրթարանի 16 աշակերտներ:

Տասնեակ աշակերտներ մասնակցեցան մարզական նկարչական, շարադրական, ասմունքի եւ հնչաբանութեան մրցանքներու: Մրցանակներու տիրացան 9-րդ դասարանէն Հրակ Պալեան («Ճիշդ հնչենք»), Ճիւլանի Սալպաշեան, Պետրոս Կիւլլեքճեան եւ Գէորգ Պալեան եւ Հրակ Քէօշկէրեան (ԼԵՎԱՄ-ի դաշտային խաղեր), Անտրիա Տէմիրճեան եւ Գէորգ Պալեան (ՀԵՀՈՄ-ի նուագի մրցանք), Սերենա Հատտատ (Համազգայինի նկարչութեան մրցանք):

Նախակրթարանի եւ երկրորդականի ատենամարզանքներուն ընթացքին (պատասխանատուներ տիկ.ք Արփի Գոյումճեան եւ Զարմինէ Ասմինեան) կազմակերպուեցան ընկերային, մշակութային, դաստիարակչական բնոյթի գործունէութիւններ, նշուեցան զանազան տօնական առիթներ, ինչպէս նաեւ կազմակերպուեցան բազմաբնոյթ խաղեր եւ մրցումներ: Հիւրընկալուեցան մտաւորականներ եւ տարբեր նիւթերու մասնագէտներ:

Երկրորդականի եւ նախակրթարանի վերին կարգերը մասնակցեցան Հայկազեանի կազմակերպած MUN-ին, ինչպէս նաեւ ազգային նախշազարդումի աշխատանիստերու:

Աշակերտներուն ընկերային հմտութիւնները զարգացնելու եւ առողջապահական գիտակցութիւնը զարգացնելու նպատակով CDLL կազմակերպութիւնը վարեց օգտաշատ աշխատանիստեր նախակրթարանի եւ երկրորդականի բոլոր աշակերտներուն համար:

Երկրորդականի աշակերտներ մասնակցեցան Theatfilm աշխատանիստի՝ զարգացնելով իրենց improvisation-ի եւ հանրութեան մէջ խօսելու հմտութիւնները:

Կազմակերպուեցան զանազան պտոյտներ եւ արտադպրոցական այցելութիւններ, որոնց մէջ յիշարժան եղան Կաղանդի պտոյտը եւ տարեվերջի ասանդական զբօսախնճոյքը Հիլ Հաթի եւ Սոլինկի մէջ:

Ուսուցիչներու Ընկերային յանձնախումբը (տիկնայք Սոնա Մուղալեան՝ ատենապետ, Հռութ Եունիսէս, Նա'ամաթ էլ Խաթիպ, Մարիա Խանճեան Մարիա Մուաուատ, Նայիրի Նոիրա) կազմակերպեցին Ամանորի ընթրիք (21 Դեկտեմբերին) եւ շրջապտոյտ դէպի Շուֆ (21 Յունիս):

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Տիկնանց օժանդակ մարմինը իր գործունեությունը շարունակեց առաելաբար ծառայելով քաֆեթերիային ներս: Յատկանշական էր կամաւոր ծառայութիւնը, ոչ միայն այժմու, այլեւ նախկին ծնողներու եւ նոյնիսկ՝ տիկնաններուն բարեկամներուն ու դրացիներուն: Օժանդակ յանձնախումբը կազմակերպեց նաեւ աշակերտական հիրասիրութիւններ՝ զանազան տօնական առիթներու եւ Լոս Անճելըսի հայ մայրերու եւ ուսուցչուհիներու միութեան աջակցութեամբ:

Տիկնանց ընկերային յանձնախումբը կազմակերպեց երկու պտոյտ դէպի Հիւսիսային Լիբանան: Մին 26 Ապրիլին դէպի Պա՛աթարա կիրճի ջրվէժը եւ շրջակայքի պատմական ու բնական տեսարժան վայրերը, իսկ երկրորդը՝ 12 Յուլիսին դէպի Տննիէյէ ու Ջղարթա:

Ծնողաց մարմինը վերամուտի, Ուսուցչաց տօնի եւ Աւարտական հանդէսի առիթի կազմակերպեց հիրասիրութիւններ, իսկ 22 Մայիսին ունեցաւ իր ամենական Մայրերու տօնի նախաճաշը:

ՀԱԳ Շրջանաւարտից միութիւնը, տարիներու դադարէ ետք, վերակազմուեցաւ եւ կազմակերպեց Brunch մը, ուր շրջանաւարտներ առիթ ունեցան հանդիպելու եւ ծանօթանալու վարչութեան ծրագիրներուն: Անոնք, գեղեցիկ ժեսթով մը այցելեցին վեթերան ուսուցիչներու տուները: Ինչպէս նաեւ տարեվերջին կազմակերպեցին Burger Night մը դպրոցի շրջափակին մէջ, կենդանի երաժշտութեամբ եւ խաղերով շրջանաւարտներու եւ բարեկամներու հաճելի ժամանց մը տրամադրելով:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Առցանց լոյս տեսան «Լրատու»-ի երեք թիւեր (ԻՁ. տարի թիւ 1, 2, 3): «Սիփան» տարեգիրքը (2024 տարի) նոյնպէս լոյս տեսաւ առցանց:

Դպրոցի գործունեութիւնները շատ մեծ տարածումով լուսաբանուեցան առցանց՝ Ֆեյսպուքի (www.facebook.com/aecollege.lb), ինսթակրամի (<https://www.instagram.com/aecollege/>) եւ կայքին (<http://www.aecbeirut.edu.lb/>) միջոցաւ:

Դպրոցի Ֆեյսպուքի պաշտօնական էջին վրայ Սեպտ. 2024 – Յուլիս 2025 եղած է 179 տեղադրում: Ինսթակրամը ունեցած է 138 տեղադրում: Կը գործեն նաեւ մանկապարտէզի՝ Armenian Evangelical College-Kindergarten, շրջանաւարտներու՝ AEC Students, Teachers and Alumni Reunion, եւ ամարտական դասարանի՝ aec.seniors25 էջերը:

ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ

13 Յունիսին կոկիկ հանդէսի մը ընթացքին, Ծաղիկ դասարանէն վկայուեցան 3 աշակերտներ, իսկ Յունիս 28-ին իրենց վկայականները ստացան 4 ընթացաւարտներ

(6-րդ դասարան) եւ 6 շրջանաւարտներ (12-րդ դասարան): Հիւր բանախօսն էր օրդ. Մեղրի Խօշեան (2004-ի շրջ.): Նոյն օրը պատուուեցան 1965-ի 6 շրջանաւարտներ՝ իրենց շրջանաւարտութեան վաթսունամեակին առիթ:

ԿՐԹԱՆՊԱՏՏ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Իբրեւ ոչ-շահութաբեր հաստատութիւն, ՀԱԳ-ի ամավարկը, բացի աշակերտներէն զանձուած գումարներէն, առաելաբար կը գոյանայ հիմնադրամներու յատկացումներով եւ նուիրատութիւններով: Դպրոցին ամավարկին 33.42 առ հարիւրը գոյացած է աշակերտական զանձումներէ (3.56% աւելի անցեալ տարուրնէ): Մնացեալը նուիրատութիւններ եւ յատկացումներ են:

Ուսուցիչներու ամսականներու արժեզրկումը թեթեւցնելու նպատակով հոգաբարձութիւնը տարին մօտաւորապէս 250.000 տոլար ընկերային յատկացում տրամադրեց ուսուցիչներուն: Սա կարելի դարձաւ բարերար Ռաֆֆի Մանուկեանի 100.000 տոլարի յատկացումին, Հայաստան համահայկական հիմնադրամի նպաստին, ինչպէս նաեւ դպրոցին ջանքով գոյացած այլ եկամուտերու շնորհիւ:

Դպրոցին իրենց տարեկան յատկացումները շարունակեցին տրամադրել Ամերիկայի հայ ամետարանշական ընկերակցութիւնը, Lebanese Ladies Cultural Society-ն, Ստեփան Փիլիպոսեանի հիմնադրամը, տեսարք Ռաֆֆի Մանուկեանը (թէ ուսուցչաց տոլարով նպաստի, թէ կրթաթոշակի յատկացում), Հրաչ Սիսեռեանը (ի յիշատակ իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեանի), տոքթ.ներ Անի եւ Նազարէթ Տարաքճեանները, ՄԱՀԱԵՄ-ի միջոցով Fondation des Cèdres-ը եւ ուրիշներ: Տեսարք Ալպեռ Պեզճեան եւ Տէյվիտ Մկրուպլեան նաեւ բացառիկ յատկացումներով նպաստեցին դպրոցի յարատեւումին: Շնորհակալութիւն բոլորին:

Բացի վերոյիշեալներէն դպրոցին զանազան կարիքներուն համար հաստատուած են հետեւեալ յատուկ հիմնադրամները կամ կը կատարուին տարեկան յատկացումներ: ՀԱԳ 80-ամեակի հիմնադրամ (Հայ ամետ. Ա. եկեղեցի), Ալպեռ Պեզճեան, ՀԲԸՄ Զ. Մարրլեան մրցանակ, նախկին աշակերտ տիար Սարգիս Սիմիթեան, Բիւզանդ եւ Սարգիս Հասրճեանի հիմնադրամ, Արա Պալեան կրթական հիմնադրամ, Զաւէն Մարրլեան կրթական հիմնադրամ, Կարապետ Չոլագեան, Եղիսաբէթ Ճանճիկեան, Ասատուր Կիլիսեան, Մարի Կէօքկէօզեան, Դանիէլ Շնորհոքեան, Օլիվիա Հապիպ, Գրիգոր Պողարեան, Խաչեր Գալուստեան, տոքթ. Բարգէն Մկրտիչեան, Անահիտ Կիլիսեան, Մարիամ Քաթմեան, Էօժէն եւ Նազելի Էքմէքճի, տոքթ. Եղիազար եւ Եսթեր Շիրաճեան, Ֆերիտէ Սալիպեան, Երուանդ Էքմէքճի, Եղիշէ Մանուկեան, Պատրիկ Աֆէեան, Ալիս Սիսեռեան, Աւետիս եւ Նորա Մենեշեան հիմնադրամները եւ տոքթ. Ճորճ Էքմէքճի առողջապահական ֆոնտը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալություն կը յայտնենք բոլոր բարերարներուն՝ անհատներ եւ կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ ՄԱՀԱԵՄ-ին, Հայկազեան համալսարանին, Հայ աւետ. կրթական խորհուրդին ու Տնօրէններու համադրող մարմինին, ու այն բոլոր մարմիններուն, կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք տարբեր ձեւերով աջակից եւ գործակից եղան դպրոցի աշխատանքներուն, նպաստելով անոր հեզասահ ընթացքին, յաջողութեան եւ վերելքին: Յատուկ շնորհակալություն Հայ աւետ. Ա. եկեղեցոյ հովիին, հոգաբարձութեան եւ խնամակալութեան, ՀԱԳ-ի հոգաբարձութեան, պատուակալ տնօրէնին, Ծնողաց, Տիկնանց օժանդակ եւ Տիկնանց ընկերային մարմիններուն, գործակից ուսուցիչներուն եւ պաշտօնեաներուն, Հայ աւետ. հրատարակչական գրասենեակին ու Տպարան Քեստենեանին:

Արմէն Իւրնէշլեան (բգթ)
Տնօրէն





ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵԾ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Ձախեն աջ՝

Պրն. Ճոնի Սայիլեան

(խորհրդական)

Պրն. Ներսես Պաղտոյեան

(ատենապետ)

Դոկտ. Արմեն Իւրնէշլեան

(տնօրէն)

Վեր. Ժիրայր Ղազարեան

(նախագահ)

Պրն. Յակոբ Տեմիրճեան

(փոխատենապետ)

Պրն. Հրաչ Հասըրճեան

(գանձապահ)

Նկարէն կը բացակայի՝

Տիկ. Կրէյս Վարդան-Տեմիրճեան

(խորհրդական)

ARMENIAN EVANG. COLLEGE
Mexique Street
P.O.Box 11-3672
RIAD EL SOLH BEIRUT 1107 2140
LEBANON
Tel. (01) 34 98 16

E-mail: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

المدرسة الارمنية الانجيلية العالية
شارع المكسيك
ص.ب. ١١-٣٦٧٢
رياض الصلح بيروت ١١٠٧ ٢١٤٠
لبنان
هاتف: ٣٤٩٨١٦ (٠١)

بريد الكتروني: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

